

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԵՐԲ Է ԾՆՎԵԼ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Սայաթնովագիտությունը արդեն ունի 115 տարվա պատմություն, արձանագրել է ոչ սակավ նվաճումներ (հատկապես բանաստեղծի հաղերի վերծանության ու թարգմանության ասպարեզում), սակայն քիչ չեն նաև այն հարցերը, որոնք սպասում են իրենց լուծմանը: Եվ այդ հարցերի մեջ առաջին շարքումն է Սայաթ-Նովայի կենսագրությունը, որ շատ ու շատ կողմերով կարոտ է լուսաբանության: Բավական է նշել, որ ցայսօր վիճարկության ենթակա է նույնիսկ մի այնպիսի «հասարակ» բան, ինչպիսին է մեծ գուսանի ծննդյան և մահվան թվականների խնդիրը: Դժվար թե գտնվեն նոր փաստաթղթեր, որոնց օգնությամբ կարելի լինի լուսավորել Սայաթ-Նովայի կենսագրության այս կամ այն մոթ անկյունը: Միակ փաստաթղթերը դարձյալ իր իսկ հաղերն են, որոնց ողնությանն են դիմել բոլոր սայաթնովագետներն անխտիր՝ սկսած անմոռանալի Դ. Ախվերդյանից, որ հենվելով գուսանի հաղերում պահպանված տեղեկությունների վրա՝ մոտավոր հաշիվներով ենթադրեց, թե Սայաթ-Նովան թնաժ պիտի ըլի 1712-ին¹:

Դ. Ախվերդյանի այս ենթադրությունը, զրբից-զիրբ անցնելով, երկար ժամանակ մնաց անվիճարկելի և փոխանցվեց նաև վրաց սայաթնովագիտությանը: Սակայն հետագայում Սայաթ-Նովայի ծննդյան թվականը կասկածի ենթարկեցին մի շարք բանասերներ: Սրանց մեջ առաջնությունը պատկանում է վրաց մեծ գիտնական Կ. Կեկելիձեին, որ իր «վրաց գրականության պատմություն» նշանավոր երկասիրության 2-րդ հատորում, 1924 թ., վիճարկեց Ի. Գրիշաշվիլու (իմա՝ Գ. Ախվերդյանի) հանձնարարած թվականը: Կեկելիձեն չէր գտել նոր փաստ: Նրա փաստարկումը զուտ տրամաբանական էր՝ հիմնված Սայաթ-Նովայի այն նույն տեղեկություններին, որոնցից հանված եզրակացությունը, ըստ տրամաբանության պարտադիր օրենքի, ոչ թե 1712 թվականն է, այլ 1722-ը:

Եվ իսկապես էլ. որտեղի՞ց է մեզ հայտնի, թե Սայաթ-Նովան ծնվել է 1712-ին:

Սայաթ-Նովան իր հայերեն մի հաղի տակ ունի հետևյալ ծանոթագրությունը. «էս դիվանի խիստ լավն է, օվօր սօվրի օղորմի ասէ: Հիմի գուզիմ քե հալիլար ասիմ: Ամեն աստված: Յիս, մրդորսու վուրթի Արութինս, պստուզ ինչուրի յարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին, ամա սուրբ Կարապետի կարօղիթենով սովրեցաջ քամանչէն ու շօնգուրն ու [տ]ամբուրենս»²:

¹ «Սայաթ-Նովայ», լուս գցած աշխատասիրությունով Դէորզեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, Յառաջարան, էջ է:

² Տե՛ս «Սայաթ-Նովա». հաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց՝ Մորուս Հասրաթյան, Երևան, 1963, էջ 10 (այսուհետև՝ բոլոր քաղվածքներն այս զրբից):

Բերված քաղվածքի ընդգծված տեղերը ցույց են տալիս, որ Սայաթ-Նովայի «Շախաթայի» կոչված այս հաղը, նախ, իր առաջին հայերեն խաղն է. («Հիմի գուգիմ քե հայելսուր ասիմ»), և, ապա, որ հայերեն իր առաջին խաղն ասելիս նա երեսուն տարեկան է եղել («պստուց ինչորի յարսուն տարին»): Մենք գիտենք նաև, որ Սայաթ-Նովայի ամենավաղ հաղը (Աղբ. 6) թվագրված է Քրոնիկոնի 430, որ է Փրկչական 1742-ը: Եվ ահա Ախվերդյանը 1742-ից հանելով 30-ը («յարսուն տարին»), ստացել է 1712-ը՝ դա համարելով Սայաթ-Նովայի ծննդյան թիվը: Բայց հենց այստեղ էլ նա (Բ. Ախվերդյանը) թույլ է տվել տրամաբանական սխալ: Չէ՞ որ Սայաթ-Նովան 30 տարեկան է եղել ոչ թե առհասարակ իր առաջին հաղը գրելիս, այլ իր առաջին հայերեն հաղը գրելիս: Իսկ նրա առաջին հայերեն հաղը թվագրված է ոչ թե 1742, այլ 1752: Ուրեմն նա 30 տարեկան է եղել 1752-ին, ուստի և ծնված պետք է լինի 1752—30 = 1722: Այսպես էլ, իրավամբ և տրամաբանված, դատել է Կեկելիձեն, բայց չունենալով օժանդակ ուրիշ փաստեր, իր կարծիքը անառարկելի չի փաթաթել սայաթնովագիտության պարանոցին, այլ, ինչպես վայել է լուրջ գիտնականին, ժող է թողել հետագա ուսումնասիրությունների համար՝ ընդամենը պնդելով, թե Սայաթ-Նովան «ծնված պետք է լինի 1722-ին և կամ XVIII դարի առաջին քառորդից ոչ ուշ»:

Կեկելիձեի սույն աշխատանքից մի քանի տարի անց սայաթնովագիտությունն ապրեց իր պատմության կարևոր փուլերից մեկը. համարյա միաժամանակ հրատարակվեցին կովկասագետ Լևոն Մելիքսեթ-Բեկի և բանաստեղծ-բանասեր Գեորգի Լեոնիձեի աշխատությունները Սայաթ-Նովայի մասին: Օգտվելով վրաց աղբյուրներից, Մելիքսեթ-Բեկն ու Լեոնիձեն սայաթնովագիտության մեջ բացեցին նոր շերտեր՝ հատկապես Սայաթ-Նովայի կենսագրական այլևայլ հարցերում: Սակայն մեղ հետաքրքրող խնդրում նրանք, դժբախտաբար, չբեցին նոր փաստեր: Լեոնիձեն բավականանում է ընդամենը մեկ-երկու նախադասությամբ: «Սայաթ-Նովայի ծննդյան թվականը դեռևս անորոշ է: Համենայն դեպս նրա ծնունդը պետք է վերագրել մոտավորապես 1718—1722 թվականներին»³: Նոր փաստարկում չունի նաև Մելիքսեթ-Բեկը: Բերելով Գ. Ախվերդյանի, Ի. Պոլոնսկու, Ն. Աղբալյանի, Ի. Գրիշաշվիլու, Պ. Մակինցյանի, Կ. Կեկելիձեի և այլոց տարբեր կարծիքները Սայաթ-Նովայի ծննդյան թվականի մասին՝ նա վերջում եզրակացնում է. «Այսպիսով մենք տեսնում ենք, որ այլևայլ հաշվառումներով Արութին Սայաթ-Նովայի ծննդյան թվականի համար կարող ենք այլևայլ թվականներ ներկայացնել. 1) 1711, 2) 1712, 3) 1719 և 4) 1722: Իսկ այս խոլորն ասում է այն, որ այս հարցի ճիշտ լուծումը դեռևս անհնար է, ուստի ստիպված ենք նշելու, որ Արութին Սայաթ-Նովան ծնված պետք է լինի 1711—1722 թվականներին, ուր 1711-ը terminus a gua է, իսկ 1722 terminus ad guem-ը»⁵:

3 Կ. Կեկելիձե, վրաց գրականության պատմություն (վրացերեն), հատ. 2, Թբիլիսի, 1956, էջ 677: Լ. Մելիքսեթ-Բեկի «վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր աշխատությունից դուրս օգտագործածս վրացերեն գրքերի և վրացագիտական տեղեկությունների համար պարտական եմ բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Մուրադյանի և (անհամեմատ մեծ չափով) թիֆլիսաբնակ գրող-բանասեր Սուրեն Ավլյանի սիրալիր օժանդակությանը, որոնց և շնորհակալությունս եմ հայտնում:

4 Գ. Լեոնիձե, Գուսան Սայաթ-Նովան (վրացերեն), Թբիլիսի, 1930, էջ 12: «Ուսումնասիրություններ վրաց գրականության պատմությունից» (վրացերեն), Թբիլիսի, 1949, էջ 265:

5 Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա (վրացերեն), Թբիլիսի, 1930, էջ 35:

Այս վերջին երկու գիրքը չէին կարող չաղղել սայաթնովագիտության վրա: Եվ իսկապես էլ, այդ ազդեցությամբ և հակազդեցությամբ է դրված Գ. Լևոնյանի «Սայաթ-Նովա. կյանքը և գործը» քննադատական ուսումնասիրությունը, որտեղ արված է մեկ քայլ դեպի առաջ՝ ընդգծելով, թե «առաջին՝ քվական կոող հայերեն երգը դրված է 1752-ին», բայց Գ. Լևոնյանը, դժբախտաբար, տրամաբանական հաշվարկումը չի տարել մինչև վերջ՝ ուշադրությունը կենտրոնացնելով հայերեն մեկ այլ խաղի վրա (Հ—22), որ ունի դրության թվական (1754 մարտ) և որի մեջ նույնպես հիշվում է մի ինչ-որ «յարասուն տարի»: Ըստ այսմ Լևոնյանը ստանում է մի նոր թվական՝ 1724-ը, ոչ այնքան պնդելով դրա վրա, որքան հաստատելով, որ «Սայաթ-Նովայի ծննդյան հարցը մնում է առկախ, մինչև ապագայում նոր, հաստատուն տվյալների երևան գալը»⁶:

Այսպիսի «նոր, հաստատուն տվյալներ» իսկապես էլ երևան եկան, որոնց համար առաջին հերթին պարտական ենք ականավոր սայաթնովագետ Մորուս Հասրաթյանին:

Առաջին «նոր, հաստատուն տվյալը» Սայաթ-Նովայի մի հաղն էր, որ չկա հեղինակի Դավթարում և մեզ է հասել որդու ժողովածուից: Այդ հաղը, իսկն ասած, սայաթնովագետներին ծանոթ էր տակավին 1903 թ.⁷ Գևորգ Աստվածատրյանի (Ասատուրի) շնորհիվ⁸: Նույն հաղը իր ժողովածուում վերահրատարակել էր նաև Դ. Լևոնյանը, սակայն դրա մեջ ոչ միայն չէր գտել «նոր, հաստատուն տվյալներ», այլև դա համարել էր ոչ լավելի-ոչ պակաս՝ «վերևի խաղի նման գրչի սպորտ», ուստի և շարունակում էր բարձրաձայն պնդել, որ «այս և նման սպորտային խաղերի մեջ չպետք է արվեստ կամ խոր մտքեր որոնել» (էջ 174, Ժ. Թ. Ժբ և Ժգ):

Այդ «գրչի սպորտի» վրա առաջինը լուրջ ուշք դարձրեց Մորուս Հասրաթյանը՝ «Սայաթ-Նովայի հայերեն մի քանի խաղերի մասին» ուսումնասիրության մեջ⁹: Տող առ տող ուսումնասիրելով Սայաթ-Նովայի «Այբբբիմրն կարթացիլ իմ դասեղաս» հաղը (Հ—51=Ժգ)՝ Մ. Հասրաթյանը եկավ այն եզրակացության, որ «Սայաթ-Նովան ծնվել է 1717 քվականին»¹⁰:

Մ. Հասրաթյանի այս եզրակացությունը, ըստ իս, ունեցավ վճռական նշանակություն՝ այն իմաստով, որ խանգարեց նրան իր իսկ հրապարակած հետագա փաստերը համադրելու և բոլորովին այլ եզրահանգումի հասնելու համար:

Մ. Հասրաթյանի վերոհիշյալ հողվածից հետո Սայաթ-Նովայի ծննդյան հարցը շարժանացավ նոր քննարկման, մինչև որ (ամբողջ 20 տարի հետո) մեկ անգամ էլ արժարժվեց 1963-ին՝ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյա հոբելյանի օրերին: Սայաթ-Նովայի մի քանի ծածկագրերի վերծանմամբ բանասիրական գիտությունների թեկնածու Ավ. Շահումյարյանը փորձեց ապացուցել, որ Սայաթ-Նովան ծնվել է 1713-ին¹⁰:

Նույն ժամանակաշրջանի իմ պրպտումները բերեցին այն եզրակացության, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722-ին:

⁶ «Սայաթ-Նովա», Երևան, 1931, էջ 21:

⁷ Տե՛ս «Ազգագրական հանգես», գիրք 10-րդ, 1903:

⁸ «Տեղեկագիր» ՍՍՍՐ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, Երևան, 1943, № 3:

⁹ Նույն տեղում, էջ 41—43:

¹⁰ Տե՛ս «Երևան», 1963, 18 հոկտեմբերի:

Արդ. ի՞նչ փաստեր են, որոնց ստիպմամբ ևս կարծում ևմ, թե Սայաթ-Նովան ծնվել է ոչ թե 1712, 1713, 1717 կամ մեկ ուրիշ թվականի, այլ 1722-ին:

Առաջին փաստը արդեն արձանագրված է. և՛ թե Ախվերդյանը իր տրամաբանական դատումի մեջ սխալ թույլ չտար՝ հենց ինքը Սայաթ-Նովայի ծնունդը կհամարեր 1722-ը և ոչ թե 1712-ը: Մեկ անգամ էլ հիշեցնելով կրկնենք, որ Սայաթ-Նովան, իր իսկ վկայությամբ, «հայէվար ասիլ» է սկսել 30-ամյա հասակում, իսկ նրա հայերեն ասված առաջին հաղը գրված է 1752-ին, երբ ինքն արդեն 30 տարեկան էր: Ուրեմն և նա պետք է ծնված լինի 1752-ից 30 տարի և՛ ուշ՝ 1722-ին:

Սայաթ-Նովան արդյոք տալի՞ս է այս թվականը հաստատող մեկ այլ ապացույց: Բարեբախտաբար, այո՛:

Մինչև Մ. Հասրաթյանի թարգմանություններն էլ սայաթնովագետներից ոմանք օգտվել են Սայաթ-Նովայի աղբյուրական ու վրացական մի քանի հաղերի մասամբ բանաստեղծական, հիմնականում տողացի թարգմանություններից: Այդպիսի հաղերից մեկն էլ ևղել է Սայաթ-Նովայի «ինքնակենսագրական»-ը, որի լրիվ թարգմանությունը մեզ բնծայեց Մ. Հասրաթյանը՝ ճիշտ զգուշացնելով, որ «սովորաբար նման գործեր գրում էին շատ աշուղներ և դրանց մեջ չավաստի ինքնակենսագրական որոնելը հաճախ սխալների մեջ կնետի հետազոտողին», որովհետև «բավական է այս ջասաթնամեի վերջին թիվը նկատի ունենալ, որը հասնում է 95 (տարիքի), իսկ գրողը՝ եղել է 35 տարեկան, որպեսզի զգուշանանք այդ սխալից»: Սակայն «այսուհանդերձ, — միանգամայն իրավացի շարունակում է նույն հետազոտողը, — սրա մանավանդ առաջին տեղում (մինչև 30—35 տարեկանը) բոլորովին հեղինակի կենսագրությունից փաստեր չորոնելը նույնպես սխալ կլինի»¹¹: Այս ջավսաթլաման (ճիշտը՝ ջասաթնամեն, որի աղբյուրներն են բնագիրը, չգիտեմ ինչու, հրատարակված է «վուջուդնամե» վերնագրով) գրված է 1750-ի հունվարի 3-ին, երբ Սայաթ-Նովան 38 տարեկան էր (բոստ ավանդական հաշվումի), 33 տարեկան (բոստ Մ. Հասրաթյանի վարկածի) և ընդամենը 28 տարեկան (և՛ թե ընդունենք, որ նա ծնվել է 1722-ին): Արդ. ի՞նչ է ասված այդ ինքնակենսագրության մեջ մեզ հետաքրքրող հարցի մասին:

Տասնըրթ տարիս լրացավ՝ դեռ ես չէի եղել դաստան.

Տասնութ տարիս երբ բոլորեց՝ տեսա և վարդ, և վարդաստան.

Տասնրինը տարեկանում ման եկա Հարաշ-Հինդուստան.

Քրսան տաբուց, Էշիի բնկած, լալ կր ծախեմ սովդաբարի: (Աղ—67):

Նախ՝ ընդգծված՝ տողի ճշգրտությունը վկայենք բնագրի համարժեքությամբ. «Բյիբմի իլրմ թամամ օլդու, լալ սաթարամ սովդաքարա»: Եվ ապա՝ ասենք այն, որ դիտեն բոլոր սայաթնովագետները. Սայաթ-Նովան ինքն է հաստատում, որ սկսել է աշուղությամբ դեղվել (այսինքն՝ «սովդաքարին լալ ծախել») 20-ամյա հասակից: Վերհիշենք, որ Սայաթ-Նովայի առաջին թվագրված հաղը 1742-ին է: Ուրեմն՝ 1742-ի՛ն նա եղել է 20 տարեկան, հետևաբար՝ ծնվել է 1742—20=1722 թվականին:

Ահա այս է երկրորդ փաստը՝ հաստատված Սայաթ-Նովայի իր իսկ վկայությամբ:

¹¹ Նույն տեղում, էջ 267:

Բայց վերոբերյալ քառյակը մեզ կարող է տալ մի երևույթ փաստ էլ՝ «Տասներիննր տարեկանում ման եկա Հաբաշ-Հինդուստան» տողը (բնագրում՝ «Օն դոգդուգ իլիմ թամամ օլդու, դյազդրմ Հաբաշու Հինդուստան») արժանացել է համարյա թե բոլոր սայաթնովադետների ուշադրությանը, ստեղծելով պատկանելի չափի դրականություն՝ Սայաթ-Նովայի «ճամփորդությունների» շրջանակի և հատկապես Հնդկաստանում լինելու կամ չլինելու շուրջ։ Ավելին. Սայաթ-Նովայի ծննդյան ավանդական թվականի փոփոխման պորժում էլ դեր ունի այս տողը։ Ս. Օգանեզաշվիլին, օրինակ, որպեսզի Սայաթ-Նովայի ինքնակենսագրության տված փաստը համաձայնեցնի Նադիրի հնդկական արշավանքին, ենթադրում է, թե Սայաթ-Նովան ծնվել է 1718-ին¹²։

Ուրիշներն էլ Սայաթ-Նովային Հնդկաստանում տեսնելու համար իրենց թույլ են տվել կամ անհիմն հայտարարություններ անել և կամ ընթանալ ընդդեմ գիտական տարրական բարեխղճության (հատկապես Գ. Աբովը)։ Վճռականապես կարելի է պնդել միայն մեկ բան. եթե Սայաթ-Նովան եղել է Հնդկաստանում, ապա ոչ իբրև աշուղ-սագանդար, նախ՝ այն պատճառաբանությամբ, որ իր իսկ ասելով՝ նա սկսել է աշուղությամբ զբաղվել քսան տարեկանից հետո, մինչդեռ «Հաբաշ-Հինդուստան» ման է եկել մինչև այդ՝ «տասներիննր տարեկանում», այսինքն՝ մինչև աշուղությամբ զբաղվելը։ Գիտենք, որ նագիր շահի արշավանքին մասնակցել է նաև վրացական մի զունդ (1000 հոգի հեծյալ)՝ Գիվի Ամիրխիզարի հրամանատարությամբ¹³։

Այդ արշավանքին փոքր-ինչ ուշացումով (Ղանդահարի գրավումից մի քառի օր հետո, 1738-ի մարտին) միացել է նաև 18-ամյա Հերակլը¹⁴։

Սայաթ-Նովան կարող էր լինել Գիվի Ամիրխիզարի հեծելազորում, բայց ոչ Հերակլի շխմբում, առավել ևս ոչ իբրև աշուղ-սագանդար, որովհետև այդ է ցույց տալիս Սայաթ-Նովայի նախորդ, այնպես էլ հետագա մեկ այլ վկայությունը։ Հաղպատում հանդիպելով Իոանն Բագրատին Արքայազնին՝ Սայաթ-Նովա (Տեր-Ստեփանոս)-ը ի պատասխան սրա հարցի պատմում է. «Ես լավ սազ (չոնգուր) էի ածում և միաժամանակ պարսկական ձայնի վերածեցի վրացական խաղերը։ Այդ դեռևս ընդունված չէր։ Եվ երբ Հերակլ թագավորը մեջլիս սարքեց և մեզ՝ նվազողներին տարան նրա մոտ, այն ժամանակ ես պարսկական նվազով վրացերեն երգեցի։ Արքան (բատոնը) շատ հավանեց և խալաթ պարգևեց ինձ։ Հետո ուրիշ շատերն էլ (այդպես) երգեցին և ընդօրինակեցին ինձ»¹⁵։

Նկարագրված դեպքը կարող էր տեղի ունենալ միայն 1744 թ. հուլիսից հետո, երբ Թեյմուրազը և իր որդի Հերակլը թագադրվեցին՝ հայրը իբրև Քարթլիի, իսկ որդին՝ Կախեթի թագավոր։ Սայաթ-Նովայի պատմածից պարզ երևում է, որ Հերակլը նրան, իբրև երգիչ-նվագածուի, ճանաչել է իր թագավորա-

¹² Տե՛ս նրա «Գիտությունների Սայաթ-Նովայի մասին» հոդվածը («Մարտակոչ», 1926, № 96 և 106)։

¹³ С. Кишмишев, Походы Надир-шаха в Герт, Кандагар, Индию и события в Персии, после его смерти, Тифлис, 1889, էջ 113։

¹⁴ Նույն տեղում, էջ 114 և 162, ինչպես նաև՝ Կ. Կիկոժե, Праклици Втрой, II до-полнительное издание, Тбилиси, 1948, էջ 32։

¹⁵ Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. 7, Երևան, 1955, էջ 248։ Պ. Մուրադյան, Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների, Երևան, 1963, էջ 95։

կան մեջլիսում միայն: Եթե Սայաթ-Նովան Հերակլի շքախմբում լիներ, այն էլ իրրև երգիչ-նվագածու, ապա Հերակլը նրան պիտի անձամբ ճանաչեր մինչև իր թագավորական մեջլիսում տեսնելը, դեռ Հնդկաստանում եղած օրերին: Իր իսկ Սայաթ-Նովայի վերոբերյալ վկայությունը ժխտում է դրա հավանականությունը: Ուրեմն, եթե նա մասնակցել է հնդկական արշավանքին, ապա իրրև ոչ աշուղ և ոչ Հերակլի շքախմբում, այլ, ամենայն հավանականությամբ, Գիվի Ամիրխովարի հեծելազնում:

Իսկ կարո՞ղ էր մասնակցած լինել:

Այս հարցին պատասխանելուց առաջ մեկ անգամ էլ վերհիշենք, որ Սայաթ-Նովան, իր իսկ վկայությամբ, Հնդկաստանում եղել է 19-ամյա հասակում: Ուրեմն դա եղած պիտի լինի կա՛մ 1731-ին (եթե Սայաթ-Նովայի ծննդյան տարին ընդունենք ավանդական 1712-ը), կա՛մ 1732-ին (եթե ընդունենք Ավ. Շահումյարյանի վարկածը), կա՛մ էլ 1736-ին (եթե ճիշտ են Մ. Հասրաթյանի հաշվումները՝ 1717-ին ծնված լինելու վերաբերյալ):

Ո՛չ 1731—32-ին, ո՛չ էլ 1736-ին Սայաթ-Նովան չէր կարող մասնակցել Նադիր շահի հնդկական արշավանքին՝ այն պարզ պատճառով, որ եթե 1731—32-ին Նադիրը նույնիսկ Նադիր չէր, այլ ընդամենը թամաղ Կուլի, ապա 1736-ին էլ նոր էր միայն շահ զարծել (մարտի 8-ին) և դեռ ամբողջ 3 տարի էլ պիտի սպասե՛ր՝ մինչև որ զրավեր Շահանարադը (1739 թ. մարտի 19-ին): Այնինչ Նադիր շահի բանակի հետ Հնդկաստանում Սայաթ-Նովայի լինելը ընդունում և պնդում են ոչ միայն ավանդական 1712-ի կողմնակիցները, այլև Ավ. Շահումյարյանն ու Մ. Հասրաթյանը, որոնք, իրրև նոր վարկածների հեղինակներ, պիտի լինեին շատ ավելի զգույշ:

Սակայն այդպես չի վարվել Ավ. Շահումյարյանը՝ իր «Սայաթ-Նովան և պարսկական մշակույթը» հոդվածում¹⁶, ոչ միայն ընդունելով «սայաթնովագետներից մի քանիսի» կարծիքը Նադիր շահի զորքերի հետ Հնդկաստանում Սայաթ-Նովայի լինելու մասին, այլև իր կարգին ավելացնելով նոր փաստեր՝ «հասնելով «այսպես ուրեմն»-ի: Բնավ չառարկելով այդ «այսպես ուրեմն»-ը՝ պետք է կրկին անգամ շեշտել, որ դրանով իսկ, իր կամքին հակառակ, Ավ. Շահումյարյանը հերքում է իր այն վարկածը, ըստ որի Սայաթ-Նովան ծնվել է 1713-ին, որովհետև այս դեպքում կա՛մ Սայաթ-Նովան պիտի լիներ ոչ թե 19, այլ առնվազն 25 տարեկան, կա՛մ էլ Նադիր շահի հնդկական արշավանքի հանրահայտ թվականը 1738-ից պիտի բերվի 6 տարով ետ:

Մ. Հասրաթյանն էլ ընդունում է, որ Սայաթ-Նովան եղել է Հնդկաստանում «վրաց Թեյմուրազ թագավորի շքախմբում, Նադիր շահի արշավանքի ժամանակ» և նույնը պնդում նաև այլուրեք¹⁷: Քիչ առաջ ասվեց, որ Սայաթ-Նովան չէր կարող լինել վրաց թագավորի շքախմբում, իրրև երգիչ ու նվագածու: Արժե ավելացնել նաև, որ բոլոր դեպքերում առավել հարմար է հիշյալ շքախմբը կապել ոչ թե Թեյմուրազի, այլ նրա որդի Հերակլի անվանը, քանի որ Նադիր շահի արշավանքին մասնակցել է սա և ոչ թե Թեյմուրազը, որին Նադիրը (ինչպես քաջ զիտե անվանի զիտնականը) թույլ տվեց՝ Վրաստան վերադառնալ: Բայց տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են ոչ այս մանրուքները:

¹⁶ «Սովետական գրականություն», 1963, № 10, էջ 127—128:

¹⁷ Տե՛ս «Սայաթ-Նովա»-ի վերջին հրատարակության առաջաբանի XI էջը, ինչպես նաև «Սայաթ-Նովայի դավթարը», Հայկ. ՍՍՏ ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 11, էջ 11:

կարևորն այն է, որ դրանով իսկ Մ. Հասրաթյանը օգնում է մեզ պրն-դելու, թե Սայաթ-Նովան չէր կարող ծնված լինել 1717-ին, որովհետև այս դեպքում էլ կա՛մ Նադիրի արշավանքը պիտի 2 տարով առաջ գցել, կա՛մ էլ բնդունել, որ Սայաթ-Նովան 21 տարեկան էր, և ոչ թե 19, ինչպես պնդում է հենց Սայաթ-Նովան, և մենք իրավունք չունենք չհավատալու նրան:

Այս էլ այն երբորդ փաստն է, ինչով ապացուցվում է, որ Սայաթ-Նովան չէր կարող ծնված լինել ոչ 1712-ին, ոչ 1713-ին, ոչ էլ 1717-ին:

Բայց վերադառնանք հարուցված և չպատասխանված հարցին. կարո՞ղ էր Սայաթ-Նովան մասնակցած լինել Նադիրի արշավանքին, ու եթե կարող էր, ապա ինչպե՞ս համաձայնեցնել այդ արշավանքի և Սայաթ-Նովայի ծննդյան տարեթվերը:

Այս հարցին կարելի է պատասխանել դրականաբար՝ ելնելով Սայաթ-Նովայի ինչպես «ինքնակենսագրության» ծանոթ տողից, այնպես էլ նրա այլևայլ հաղբերի ընձեռած այն նյութից, որ բազմիցս օգտագործված է սայաթնովագետների կողմից, ուստի և հարկ չկա ավելորդ անգամ վերաքաղելու: Գալով Սայաթ-Նովայի հայտնած թվի («տասներինը տարեկանում») և Նադիրյան արշավանքի տարեթվի անհամաձայնությանը՝ պիտի նկատել, որ Նադիրյան արշավանքով հետաքրքրվողները բավականաչափ չեն խորացել այդ արշավանքի մանրամասնությունների մեջ՝ գոհանալով լոկ այն իրողությամբ, որ արշավանքն սկսվել է 1738-ին և Մեծ Մոզուլի մայրաքաղաք Շահջանաբադը (ներկայիս Դեհլին) գրավվել է 1739-ի մարտին:

Այս թվերը սխալ չեն, բայց թերի են: Նադիրյան արշավանքը բնավ էլ չվերջացավ Մեծ Մոզուլի մայրաքաղաքի գրավմամբ, այլ կերպ ասած՝ 1739-ի գարունով: Նադիրը Իրան վերադարձավ ոչ թե 1739-ին, այլ ուղիղ 2 տարի հետո՝ 1741-ին: 1739-ի մայիսի 16-ին, Դեհլիում 56 օր մնալուց հետո, Նադիրը բռնեց վերադարձի ճամփան, բայց հասնելով Քաբուլ որոշեց Հինդից հետո հարձակվել Սինդի վրա: Այս Սինդը, որ գտնվում է Հինդի և Զենաբի միջև, նույնպես «մտնում էր դեհլիական կայսրության կազմի մեջ»¹⁸, ուրեմն և այս հարձակումն էլ այլ բան չէր, քան «հնդկական արշավանք»: Սինդը նա գրավում է 1740-ի հուլիսի 4-ին, ապա գնում Հերաթ, որտեղ իմանում է, որ Բուխարայում անհանգիստ վիճակ է, ուստի և արշավում է Բուխարա, «խաղաղեցնում», պայմանագիր կնքում տեղի էմիրի հետ, որից հետո բռնում «սրբազան քաղաք» Մեշխեթի ճամփան: Պարսկաստան է վերադառնում 1741-ի հունվարին:

Այսպիսով՝ Նադիրյան «հնդկական արշավանք» ասելիս պետք է նկատի առնել ոչ թե 1738—39 թթ., ինչպես վարվել են այս խնդրով զբաղված բոլոր սայաթնովագետներն անխտիր, այլ 1738—1741 թթ.: Այս հարցով հետաքրքրվողները աչքաթող են արել նաև հայ պատմիչին՝ հաշատուր աբեղա Զուղայեցուն, որ մանրամասնությունների համար հանձնարարելով «նախաշավիղ Անգլիացի ճառագիրն» (կամ՝ «որպես գրէ Անգլիացի վիպագիրն վասն նորա») հնդկական արշավանքից Նադիրի վերադարձը դնում է «ի 1190 թուոջն» այսինքն՝ 1741-ին¹⁹:

¹⁸ Ս. Ք ի շ մ ի շ և, նշվ. աշխ., էջ 209:

¹⁹ «Հաշատուրի աբեղայի Զուղայեցույ Պատմութիւն պարսից (ԺԸ դար)», Վաղարշապատ, 1905, էջ 262:

Ավելին. Նազիրը 1741—43 թվականներին էլ վարում է մեկ այլ արշավանք՝ այս անգամ դեպի Օման²⁰:

Այս Օմանն էլ Սայաթ-Նովան կարող էր համարել «Հաբաշու Հինդուստան», և ամենայն իրավամբ:

Այսպիսով՝ մեկ 1741-ի փոխարեն պատմությունը տալիս է երկու 1741՝ կապված «Հաբաշու Հինդուստան»-ի հետ և դրանով իսկ մեզ ձերբազատում «Ննդկական արշավանք»-ի ավանդական 1738—39 թթ.: Պատմական այս թվերին արդեն իրազեկ՝ այժմ եթե նորից դառնանք Սայաթ-Նովայի իր իսկ վկայությունը («տասներինը տարեկանում ման եկա Հաբաշ-Հինդուստան»), ապա կտեսնենք, որ այդ «տասներինը տարեկանում»-ը այլևս անկարող է կատարել այն «ավերածությունները», ինչ արել է տասնամյակներ շարունակ. իսկապես էլ Սայաթ-Նովան ծնված լինելով 1722-ին, կարող էր «տասներինը տարեկանում», այսինքն 1741-ին, «ման գալ» Հնդկաստանում: Արդյոք բուն Ննդկական արշավանքի՝ ժամանակ (որ ավարտվեց 1741-ին), թե՛ այսպես կոչված օմանյան արշավանքի՝ ընթացքում (որ սկսվեց 1741-ին),—այս արդեն այլ հարց է և բնավ էլ կարևոր չէ:

Սայաթ-Նովայի «ինքնակենսագրություն»-ից մակաբերված այս փաստն էլ կարելի է համարել մի շուրջը կռվան՝ հօգուտ այն վարկածի, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722-ին:

Միայն այս չորս ապացույցները բավական էին, րստ իս, որպեսզի Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հարցը վճռված համարվեր: Բայց, բարեբախտաբար, Սայաթ-Նովայի հաղերը մեզ տալիս են նաև այլ ապացույցներ՝ ոչ պակաս զորավոր, քան արդեն բերվածները:

Այսպիսի մի զորավոր կռվան է տալիս ադրբեջանական այն հաղը, որ զրավում է Սայաթ-Նովայի Դավթարի 101-րդ էջը և որով փակվում է Դավթարի ադրբեջանական մասը: հաղը ոչ միայն ծանոթագրված է, այլ նաև, բարեբախտաբար, թվագրված «մարտի 4-ին, Քրոնիկոնի 443-ին» (այսինքն՝ 1755-ին): հաղը հորինված է բանաստեղծական շատ բարդ ձևով. ալիֆբայա է (այսինքն՝ զրված արաբական այբուբենի շարքով), բայց նաև դարահեջա (այսինքն՝ հանգավորվող բառերը զրվում են տառերի այբուբենական անունով), ինչպիսին է հայերեն 50-րդ (ծր) հաղը:

Ու եթե Մ. Հասրաթյանը ջանք չի խնայել թարգմանելու կրկնակի դժվարին այս հաղը (ադր. 77), ապա ամենից առաջ այն պատճառով, որ դա, բացի ալիֆբայա և դարահեջա լինելուց, վերջում ունի նաև մի հույժ կարևոր ծածկագիր. «Սայաթ-Նովան հեյ-ից դեպի վով քայլեց» (բառացի՝ «Հեյ-ից Սայաթ-Նովան վով-ին հասավ», (բնագրում՝ «հեյդան Սայադ Նովա վովա վարնդի»):

Թարգմանիչ-սայաթնովագետը ոչ միայն հասկացել, այլև համապատասխան ծանոթագրության մեջ ընթերցողներին էլ հասկացնում է, որ հեյ-ը արաբական այբուբենի ու տառի այբուբենական անունն է, 8 թվանշանի արժեքով. րստ որում արաբական այբուբենի 6-րդ տառն է, պարսկականի 8-րդը, իսկ վով (վավ)-ն էլ վ տառն է՝ 6 թվանշանի արժեքով, արաբական այբուբենի 26-րդ տառը, պարսկականի՝ 30-րդը:

²⁰ См. Гафуров Б. Г., История таджикского народа, Москва, Госполитиздат, 1949, т. 100:

Բայց, այս ամենն իմանալով հանդերձ, ինչպե՞ս բացել ծածկադիրը: «Եթե ընդունենք, որ Կրգիչը թվերի ծածկագիր է տվել և գումարենք,—շարունակում է բարձրաձայն խորհրդածել Մ. Հասրաթյանը,—կստացվի 14—ոչինչ ասող գումարը. եթե բազմապատկենք՝ 48-ը նույնպես ոչ մի արժեք չի ներկայացնում, որովհետև ոտանավորը զրված է 1755 թ.: Եթե տառերի այբուբենական հաջորդականությունը գումարենք (որը չի արվում), ապա արաբականով (որ հիմնականն է) կստացվի 32, իսկ պարսկականով (որ շատ քիչ հավանական է), կստացվի 38:—Եթե և և ն տառերը լինեին, կենթադրեինք, որ հեղինակի դրական անվան ինիցիալներն են, բայց այս դեպքում էլ չէր ասի «Ս.—Ն. հաւսաւ»: Մտածել, թե աննպատակ է գրել այդ տառերը, թեկուզ որպես դրականության, գրադիրության հասնելու սիմվոլիկ արտահայտություն, դժվար է»²¹:

Ինչպես տեսնում եք՝ մեծարդո բանասերը փորձել է բոլոր հնարավոր ձևերը, բայց չի կարողացել հասնել ծածկագրի բացմանը: Նրան, իմ խորին համոզմամբ, այդ գործում խանգարել է ոչ այլ ինչ և ոչ այլ ոք, քան հենց ինքը, ավելի ճիշտ՝ իր երբեմնի այն կարծիքը, թե Սայաթ-Նովան ծնվել է 1717-ին:

Եթե չլինեի այդ կանխակարծությունը, Մ. Հասրաթյանը ծածկագիրը բացած կլինեի իր իսկ երրորդ «եթե»-ի վրա. «Եթե տառերի այբուբենական հաջորդականությունը գումարենք (որ չի արվում), ապա արաբականով (որ հիմնականն է) կստացվի 32, իսկ պարսկականով (որ շատ քիչ հավանական է) կստացվի 38»:

Այս դատողության մեջ ամեն ինչ ճիշտ է, բացի երկու մանրուքից, որոնցից առաջինը փակագծված «որ չի արվում» նախադասությունն է: Իսկ ինչո՞ւ «չի արվում», և այն էլ ծածկագրի բացելու մեջ: Թե՛ «չի արվում» լոկ այն պատճառով, որ արդյունքը չի ստացվում 1717: Ուրեմն և փորձենք կանգ առնել կես ճանապարհին, ինչպես (շատ ափսոս) արվել է, այսինքն՝ արաբական հեյ և վուլ (վալ) տառերի այբուբենական թվահամարները գումարելով ստանանք նույն 32 թվանշանը, որ մեկնից առաջ ստացել է ինքը՝ Մ. Հասրաթյանը: Իսկ այժմ վերհիշենք, որ ծածկագրի պարունակող խաղը դրված է «մարտի 4-ին, Քրոնիկոնի 443-ին», այսինքն՝ 1755-ին: Ուրեմն՝ 1755-ին «Սայաթ-Նովան հեյ-ից հասավ վուլ-ին». տառերը իրենց համապատասխան թվերով փոխարինած (26+6)՝ «Սայաթ-Նովան հասավ 32-ի», այլ կերպ ասած՝ 1755-ին Սայաթ-Նովան դառնալ 32 տառեկան: Ըստ այսմ՝ նա պիտի ծնված լինի 1755—32=1723 թվականին:

Մենք այս արդյունքից էլ շատ գոհ կլինեինք, որովհետև մեկ տարվա տարբերությունը բնավ էլ չէր կարող խարխուլ առաջարկվող վարկածի հիմքերը: Բայց, բարեբախտաբար, այդ մեկ տարվա տարբերությունն էլ կջնջվի. եթե փորձենք ստուգել Մ. Հասրաթյանի հաշվումները և ճշտենք նրա թույլ տված երկրորդ փոքրիկ սխալը, որ մեծ նշանակություն է ստանում:

Բանն այն է, որ արաբական այբուբենում վալ-ը ոչ թե 26-րդ տառն է, ինչպես հաշվել է Մ. Հասրաթյանը, այլ 27-րդ (նախավերջին) տառը, ուստի վալ և հեյ տառերի թվահամարի գումարը (27+6) դառնում է ոչ թե 32, այլ 33: Ուրեմն 1755-ին Սայաթ-Նովան ոչ թե 32, այլ 33 տառեկան էր, այսինքն՝ նա ծնվել է 1755—33=1722 թ.:

21 «Սայաթ-Նովա». էջ 270—71, 77-րդ հաղի ծանոթագրությունը:

Միայն սրանով՝ այս մեկ հատիկ փաստով, կարելի էր ապացուցված համարել, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722-ին, և դրա մասին խոսել այլևս ոչ քե իրեր վարկածի, այլ իրեր անօխտելի նշմարտության: Բայց, ինչպես տեսնում էք, սա ոչ միակ ապացույցն է, ոչ էլ վերջինը. հինգերորդն է:

Տեղին է հիշել մի շարք անուղղակի կովաններ էլ՝ հօգուտ այն բանի, որ Սայաթ-Նովան չէր կարող ծնված լինել 1717, առավել ևս 1712—1713 թթ.:

Սայաթ-Նովան իր «ջահիլ կինք»-ից է խոսում վրացական մի հաղում (16-րդ), ինչպես և մեկ այլ աղբյուրական հաղում (Հավելված Բ-ի 4-րդը), որ զրված է, անկասկած, պալատից վտարվելուց հետո: Ահա այս հաղի վերջին քառյակը.

էս վորաց րավաղներու մեջ չիվան կիներս մաշեցի.
էս սիվասիրտ յարի ձեռին արին-արտսունք թափեցի.
Անարկվածի նշան ճակտիս՝ խալխի նամուս քաշեցի.
Սայաթ-Նովեն իմ րանաստեղծ՝ ոահմի-ջանանի սիրու:

Պալատից Սայաթ-Նովայի երկրորդ անգամ վտարվելը, ոչ առանց հիմնավոր պատճառների, սայաթնովագետները ընդունում են 1760—62 թթ., երբ նա պիտի լիներ 48—50 տարեկան (եթե ծնվել է 1712-ին): Այս տարիքի մարդը չէր կարող վրաց թավաղների մեջ իր «ջիվան կինքը» մաշելուց խոսել: Պատկերը բոլորովին կփոխվի, ընդգծված տողն իր հավաստիությամբ կհանդի, թվական տվյալներն իրար շեն ժխտի, եթե ընդունենք, որ նա ծնվել է մի ամբողջ տասնամյակ հետո՝ 1722-ին:

Հիշյալ երկու հաղն էլ, զժբախտաբար, անթվակիր են, ուստի և ունեն կուլանի ուժ, բայց ոչ որոշակի ապացույցի: Սակայն կա աղբյուրական մի հաղ (72-րդը), որ թվագրված է «մայիսի 5-ին, Քրոնիկոնի 441-ին», այսինքն՝ 1753-ին: Այս հաղի նախավերջին քառյակում էլ Սայաթ-Նովան գրում է. «նովջիվան իս, ափսոս տղա իս՝ բեշ-բեշ»: հաղը գրելու ժամանակ (1753-ին) Սայաթ-Նովան պիտի լիներ 41—42 տարեկան (եթե ծնվել է 1712-ին) կամ 36 տարեկան (եթե ծնունդն է 1717-ի): 36—42 տարեկան մարդը իր մասին կարող էր ասել «նովջիվան իս»: Ոչ մի կերպով: Եվ, ընդհակառակը, իրեն «նովջիվան» կարող էր համարել ընդամենը 31-ամյա մեկը, որ պիտի, ըստ այսմ, ծնված լիներ 1722-ին:

Այս վերջին (թվագրված) հաղը, անդրադարձ ապացուցման հանրահայտնի օրենքով, ապացույցի ուժ է տալիս նաև իր նախակից երկու խաղին էլ, որոնցից յուրաքանչյուրը կարող է աշխատել իբրև մի նոր կովան կամ ապացույց՝ իննի հասցենով թիվն այն փաստարկումների, ըստ որոնց Սայաթ-Նովան ծնված պիտի լինի 1722-ին: Բայց եկեք շոալաբար այս վերջին երեք փաստարկումների փունջը ընդունենք իբրև ընդամենը մեկ՝ իբրև վեցերորդ ապացույց և առաջ անցնենք:

Սայաթ-Նովան ունի, բարեբախտաբար, ևս մի նմանօրինակ հաղ էլ (աղբյուրական 43-րդը), որ նույնպես թվագրված է («հունիսի 10-ին, Քրոնիկոնի 446-ին», այսինքն՝ 1758-ին): Եվ ահա 1758-ին էլ Սայաթ-Նովան իր մասին գրում է. «Հրլա կանանչ՝ շուր շովիրում շուրացա» (բնագիրը՝ «յաշ իքան լիսրլըմ գուրու յանինա», բառացի՝ «ղեռ թաց-կանաչ՝ ընկա շորի կողքը»):

Եթե Սայաթ-Նովան ծնվել է 1712—13 թթ., ուրեմն իրեն «հրլա կանանչ» է հաշվում 45—46 տարեկանում, որ չէր կարող անել պարկեշտության մի այն-

պիտի տիպար, որպիսին է Սայաթ-Նովան: 1722-ին ծնված լինելու դեպքում նա, այդ տողերը գրած ժամանակ, պիտի լիներ ընդամենը 36 տարեկան և իր ապրած տվյալտալից երեկվա մասին կարող էր իրավամբ մրմնջալ. «Հըլա կանանչ չոր շոլիրում չորացա»:

Այս էլ կարող է ծառայել իբրև յոթերորդ ապացույց՝ ընդդեմ այն վարկածների, թե նա ծնվել է 1712—13 կամ 1717 թթ., և հոգուտ այն բանի, որ նրա ծննդյան տարին է 1722-ը:

Իբրև ութերորդ փաստ հիշենք, որ Սայաթ-Նովան (վրացական 30-րդ հաղում) Հերակլ թագավորին համարում է իր «հոբևուր մինձ ծնուղքը» (բնագրում՝ «իմ հոգևոր հայրն ու մայրն ես դու»): Որևէ մեկին (թեկուզ թագավորի) ծնող կոչելու համար (թեկուզ և հոգևոր) պետք է շատ թե քիչ փոքր լինել նրանից: Արժե՝ արդյոք երկար ու բարակ ապացուցել, որ պարզապես անկարելի է ենթադրել հակառակը:

Մենք, բարեբախտաբար, գիտենք Հերակլի ծննդյան ոչ միայն տարին, այլև ամսաթիվը: Նա ծնվել է 1720 թ. նոյեմբերի 7-ին: Արդ. եթե Սայաթ-Նովան ծնվել է 1712—13-ին, ապա նա Հերակլից մեծ էր 8 կամ 7 տարով, իսկ եթե ծնվել է 1717-ին, ապա մեծ էր 5 տարով: Սայաթ-Նովան ինչպե՞ս պիտի «ծնող» անվաներ մեկին, որ իրենից փոքր էր 8—5 տարով,—ո՞վ և ինչպե՞ս պիտի պատասխանի այս «հասարակ» հարցին...

Սայաթ-Նովան ունի աղբյուրներեն մի հաղ, որ տասնամյակներ շարունակ անձանոթ է մնացել բոլոր սայաթնովագետներին: Այդ հաղի հայերեն թարգմանությունը, ցավ ի սրտի, չունենք, բայց արդեն ունենք աղբյուրներեն չրատարակությունը՝ 1963 թ. Բաքվում լույս տեսած «Սայաթ-Նովա» ժողովածուի 32-րդ էջում: հաղի բնագիրը դավթարի 87-րդ էջում է, վրացատառ: Դավթարի ծանոթագրությամբ իսկ ասած՝ «էս լավ դարահեջա է», այսինքն՝ ոտանավորի այն տեսակը, որ հանգակապ բառերը գրում է բառակազմիչ տառերի անուններով, ինչպես է, օրինակ, հայերեն 49 և 50-րդ հաղերում (հանգակապ «քաբաբ»-ի և «սաբաբ»-ի փոխարեն՝ «ԲԵ ու այիբ երկու բեն» և «սէ ու այիբ էրկու բեն»):

Բայց այս հաղը բացառիկ արժեք է ստանում ոչ իր բովանդակությամբ, ոչ էլ իր գրելաձևի կատարելությամբ, այլ այն բանով, որ իր վերջին տողով հայտնում է Սայաթ-Նովայի տարիքը. «Յաշըմըզի բեու ալիֆ իթի ֆաֆ», այսինքն՝ «տարիքս թեու ալիֆ երկու ֆաֆ է»:

Արդ. ինչպե՞ս վերծանել այս ծածկագիրը:

Ընդգծված բառերը արաբական Թ, Ա և Ք տառերի այբուբենական անուններն են, ըստ որում Թ-ն ունի 9 թվանշանի արժեք, Ա-ն՝ 1, իսկ Ք-ն՝ 20: Ու եթե շմոռանանք, որ Ք-ն կրկնակի է («իթի»-երկու), ապա թվանշանների գումարը կդառնա $50(9 + 20 + 20 + 1)$:

Այսպիսով, առաջին իսկ մոտեցմամբ պարզ է դառնում, որ Սայաթ-Նովան իր այս հաղը գրել է 50 տարեկանում: Բայց տակավին պատճառ չունենք ուրախանալու, որովհետև հաղը թվագրված չէ, ուստի և չենք կարող իմանալ, թե այդ ո՞ր թվականին է նա ևղել 50 տարեկան: Ուրեմն ծածկագիրը այնքան էլ դյուրին չէ, ինչպես թվաց առաջին հայացքից, և լուծման մի երկրորդ բանալի էլ է պահանջում:

Ահա այդ երկրորդ բանալին:

Բանն այն է, որ արաբական այբուբենն ունի երկու թ. մեկը այբուբենի երրորդ տառն է՝ 400 թվանշանի արժեքով, իսկ մյուսը այբուբենի 16-րդ տառն է՝ 9 թվանշանի արժեքով: Տեղադրելով թ-ի այս թվական արժեքը (400), այժմ էլ ստանում ենք 441 ($\theta = 400 + \omega = 1 +$ երկու $\varphi = 40$): Անկասկածելի է, որ այս 441-ը այլ բան չէ, քան վրաց Քրոնիկոնի տարին, ուստի և դրան զումարելով անհրաժեշտ 1312-ը, կստանանք 1753: Այժմ արդեն կարծես թե ծածկագիրը լուծված է. 1753 թ. Սայաթ-Նովան եղել է 50 տարեկան: Բայց... ինչպե՞ս թե... ուրեմն նա ծնվել է ոչ 1712—13, ոչ 1717, ոչ էլ 1722, այլ... 1703 թվականի՞ն:

Պարզ է, որ այս հաշվումներից մեկը սխալ է: Եվ սխալ պետք է լինի ոչ այնքան տարեթիվը (1753-ը), որքան տարիքը (50-ը): Սայաթ-Նովան իր այս հաղը գրելիս չէր կարող 50 տարեկան լինել՝ թեկուզ և այն պարզ պատճառով. որ այս դեպքում հաղը պիտի գրված լիներ կա՛մ 1762-ին (եթե նրան ծնված համարենք 1712-ին), կա՛մ 1763-ին (եթե նա ծնվել է 1713-ին), կա՛մ 1767-ին (եթե 1717-ի ծնունդ է): Բայց ոչ միայն սայաթնովագետները, այլև սայաթնովասեր ընթերցողներն էլ գիտեն, որ Սայաթ-Նովայի Դավթարը փակվել է 1759-ի կեսերին: Իսկ քննարկվող ծածկագրավոր հաղը, ինչպես արդեն ասվեց, գրանցված է Դավթարում (87-րդ էջում), վրացերեն տառերով: Ավելին. այս հաղի առաջին քառյակը (հայերեն, բոլորգիր) գրված է 22 էջ առաջ՝ 65-րդ էջում, բայց հետո, չգիտես ինչու, չի շարունակված: Հետագայում, նույն քառյակի տակ, այս անգամ վրացերեն տառերով, արտադրված է բոլորովին այլ հաղ՝ մի շղթայակապ-գիճիկով (ինչպես և նշված է խաղի վերջում) հորինված «չ» տառի վրա (սրա հայերեն թարգմանությունն է աղ. 72-րդը): Հետաքրքրական է և այն, որ այս («չ» տառի վրա հորինված) հաղը նաև թվագրված է (1753-ի մայիսի 5-ին): Այս փաստն էլ դալիս է ապացուցելու, որ քննարկվող (ծածկագիր ունեցող) հաղը նույնպես պիտի գրված լինի մոտավորապես նույն (1753) թ., համենայն դեպս ոչ երբեք 1762—63 (ևս առավել 1767) թթ., որովհետև, կրկնենք, Դավթարում չկա և չի կարող լինել ուրե՛կ խաղ՝ գրված 1759-ի կեսերից հետո:

Արդ. ինչպե՞ս լուծել ծածկագիրը, այսինքն՝ որոշել, թե սույն հաղը գրելիս քանի՞ տարեկան էր Սայաթ-Նովան:

Փորձենք նորից խորանալ հաղի տաղաչափական հորինվածքի մեջ, այսինքն՝ վերհիշենք, որ դա գրված է ղարախեջա—հեղակապ ձևով, ուստի և նրա հանդակապ բառերը պիտի լինեն շաֆա («չիմու ալիֆ իբի քաֆ»), հաֆաֆ («հեու ալիֆ իբի քաֆ»), աֆաֆ («սինու ալիֆ իբի քաֆ»), դաֆաֆ («զեու ալիֆ իբի քաֆ»), ափաֆ («իբի ալիֆ իբի քաֆ») և, վերջապես, քաֆաֆ («թեու ալիֆ իբի քաֆ»), որ հենց ծածկագիրն է:

Ուրեմն մենք պիտի հաշվենք ոչ թե թ, Ա և երկու Ք տառերի թվարժեքների զումարը, այլ քաֆաֆ բառի մեջ եղած տառերի թվարժեքների զումարը, այսինքն՝ մեկ Ա-ով ավելի: Ըստ այսմ տարեթիվն ստացվում է ոչ թե Քրոնիկոնի 441-ը, այլ 442-ը, ուրեմն և՛ հաղը գրված է ոչ թե 1753, այլ 1754 թ.: Սա արդեն վերջնական և հաստատ թվական է: Անլուծելի է մնում տարիքի հարցը. որովհետև քաֆաֆ-ի տառերի թվագումարն էլ անում է 51, ուրեմն և Սայաթ-Նովայի ծնունդն էլ ընկնում է դարձյալ 1703-ին, որ անկարելի է, ուստի և՛ սխալ:

Իսկ ո՞րն է բանալին:

Վերհիշենք ծածկագրի տողը. «Յաշմըդի՝ թեու ալիֆ իքի քաֆ», որի բառացի թարգմանությունն է՝ «տարիքս՝ Թ, Ա, երկու, Ք»: Թ—9, Ա—1, երկու—2, Ք—20, այսինքն՝ $9 + 1 + 2 + 20 = 32$:

Ուրեմն՝ իր այս հաղը Սայաթ-Նովան գրել է 1754 թ., երբ 32 տարեկան էր: 1754-ից հանենք 32-ը և կստանանք... 1722:

Այս էլ արդեն իննեւորդ զորավոր ապացույցն է այն ճշմարտության, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722-ին: Ըստ որում, շմոռանանք, որ այս բոլոր ապացույցները տալիս է ոչ այլ ոք, այլ ինքը՝ Սայաթ-Նովան:

Նրա հաղերի մեջ այլևս չկա՞ ևս մի նոր, մի տասներորդ ապացույց՝ հօդուտ առաջարկվող վարկածի:

Կա նաև այդ տասներորդը:

Այստեղ է, որ Սայաթ-Նովայի ծննդյան հարցը սերտորեն առնչվում է նրա սիրո խնդրին, որ նույնպես վեճերի առարկա է դարձել և կարոտ է լուծման:

Սայաթնովագետներից (թե՛ բանասիրական, թե՛ գրականագիտական հարցերով զբաղվողներից) ոչ ոք ուշք չի դարձրել Սայաթ-Նովայի մի տողի վրա, որ ունի, ինչպես կտեսնենք, նաև կենսագրական արժեք: Առաջինը և միակը խ. Սարգսյանն է, որ այդ տողը մեջ է բերել գրականագիտաբար և հենց այդ պահին էլ նկատել տողի գիմադրողականությունը՝ դյուրին շմեկնաբանման իմաստով. «Սայաթ-Նովան իր կյանքը, իր հոգին այնքան է միահյուսված երեակայում իր յարի հետ,—անկախ յարի վերաբերմունքից,—որ նրան թվում է, իբր, իրենց մայրերը միաժամանակ են ծնել նրանց: Այդպես էլ միահյուսված պիտի զնա: Այլ ուղի Սայաթ-Նովան չի պատկերացնում... Թվում է, այդպես պետք է մեկնաբանել մեջբերված տողը»²²:

Ուրիշ ոչ ոք այս տողն ուշադրության չի առել՝ դրա մեջ, հավանաբար, տեսնելով մի բանաստեղծական փոխաբերություն միայն, թեպետ և այդ տողը, նույնիսկ առաջին իսկ հայացքից, շատ ավելի նման է կենսագրական ակնարկության, քան բանաստեղծական փոխաբերության:

Փորձենք քննարկել այդ տողը:

«Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած գիտենաք» (հ—57):

Եթե տողն իբրև փոխաբերություն ընկալելուց վերանանք, ապա դրա իմաստը պիտի հասկանանք ոչ այլ կերպ, քան պարզապես՝ «իմացեք, որ ևս ու իմ սիրեկան յարը ծնվել ենք միևնույն տարեթվին»:

Ուրեմն՝ այդ անհայտ տարեթիվն իմանալու համար մենք պիտի լուծենք մի խնդիր, որն իր հերթին ունի երկու անհայտ, նախ՝ ո՞վ է «սիրեկան յարը», և ապա՝ ե՞րբ է ծնվել:

Նախ՝ ո՞վ է «սիրեկան յարը»:

Չափազանց միամիտ պիտի լինել կարծելու, թե Սայաթ-Նովայի պես մեկը, բնությունից օժտված բազում շնորհներով ու հմայչությամբ, կարող էր կյանքում ճանաչած լինել միայն մեկ կնոջ: Եվս առավել միամիտ (այս անգամ՝ նաև անգետ) պիտի լինել մտածելու, թե Սայաթ-Նովայի բոլոր սիրային հաղերը ինքնակենսագրական բնույթ ունեն: Չպիտի մոռանալ, որ նա ոչ միայն բանաստեղծ է, այլև առանձնահատուկ տիպի բանաստեղծ՝ աշուղ-գուսան, որի սուաջնսհները պարտականությունն է երգել սերը առհասարակ և զոզալ-

²² Խ. Սարգսյան, Սայաթ-Նովա, 1963, Երևան, էջ 53:

ներին ընդհանրապես: Հիշենք հարյուրավոր օրինակներից միայն մեկին՝ անվանի Շիրինին, որ կուրացել էր 2-ամյա հասակում, ուրեմն և անձնապես չէր կարող տեսնել կին ու կանացի զեղեցկություն, բայց և այնպես իր ողջ կյանքում երգում էր հենց կինն ու զեղեցկությունը և հետևել կոչ անում, թե

Անթարշաժյալ սերերով վայելենք Վիճակ միասին,
Վայելենք այս աշխարհը երկուր ժամանակ միասին...

Առերևույթ արտառոց այս երևույթը կդառնա հասկանալի և բնական, եթե շմոռանանք, որ աշուղ-զուսանը պարտավոր էր խոսել իր բերանով, բայց ունկնդիրների սրտից. նա որքան արտահայտիչն էր իր ապրումների, երիցս և բազմիցս ավելի թարգմանիչն էր իր ունկնդիրների զգացմունքների: Չմոռանանք, որ ամեն աշուղ, մանավանդ «մեջլիսներու վարթը», պարտավոր էր զովիլ մեջլիսների նույնիսկ անծանոթ զոգալներին, հարսանիքներում՝ նորահարս-նեղին, խնձույթ-խրախճանքներում՝ տիրուհուն: Չմոռանանք նաև, որ աշուղ-զուսանի գործունեությունը սերտորեն և համարյա թե մշտապես շաղկապված էր բաս-ին (երգային բանավոր մրցությանը), որի ընթացքում հարցին պատասխանող աշուղը, ինչպես ասում են՝ իր տերը չէր, իրեն զգում էր ոտքով ու ձեռքով կապված, որովհետև իր պատասխանները թելադրվում էին մրցակցի հարցից. մրցահրավեր երգին նա տեղն ու տեղը պիտի պատասխաներ նույնատիպ երգով: Այսպես հորինվում էին (և չէին կարող չհորինվել) այլազան և խրախճալի երգեր՝ հաճախ անսահմանորեն հեռու այս կամ այն աշուղի անձնական կյանքից և անհատական-կենսագրական վիճակից:

Չմոռանանք նաև, որ աշուղների դարավոր նշանաբանն է եղել շտեսած սիրաճարվելը, անկենդան-անիրական կնոջ սիրելը և սրան երգելն ու զովերգելը, իրենց լեզվով ասած՝ բուքա առնելը (հիշենք Սայաթ-Նովայի տողը. «Բուքա Շահասանմարս դուն իս»):

Սայաթ-Նովան էլ աշուղ էր, ուրեմն և նրա ստեղծագործությունն էլ լի է տյուրտյուր և պարտադիր, ինքնակենսագրական-անձնական ապրումներից հեռու, զուտ աշուղական հաղերով՝ ասված խնձույթներում ու հարսանիքներում, ասված բաս-ի ժամանակ, ասված իբրև ճարտար կամ իբրև պատասխան, իբրև տուրք անիրական-անկենդան բուքա-ին: Ու եթե այս ամենին դամարենք նաև այն, որ նա անձնապես էլ չէր կարող ողջ կյանքում միայն մեկ կնոջով հափըշտակված ու տարված լինել, ապա պատկերը կդառնա պարզ:

Բայց անկարելի է չնկատել և նկատելուց հետո էլ անհնարին է ժխտել այն իրողությունը, որ Սայաթ-Նովային հետադաշում հանդիպել է մի մեծ և զանազանվող, այլևս անանց և ողբերգական, կարելի է ասել՝ նույնիսկ ճակատագրական սեր: Այդ ժամանակվանից սկսած նրա համարյա բոլոր հաղերը կրում են նույն շիկացած սիրո խարան-կնիքը (իր բառով ասած՝ դաղը): Ուրանալ այս՝ նշանակում է ոչինչ չհասկանալ Սայաթ-Նովայից:

Մենք գիտենք նաև այդ կնոջ անունը, որ Սայաթ-Նովան ծածկազրարար պահել է իր բազմաթիվ հաղերի մեջ: Այդ հաղերից երկուսը հայերեն են և հանրահայտ: Տասնամյակներ առաջ բանասեր Գևորգ Ասատուրը և Մուշեղ Աղայանը վերծանելով այս հայերեն հաղերը (11-րդ և 65-րդ)՝ աներկբայորեն հաստատեցին, որ Սայաթ-Նովայի Յարի անունը Աճա է: Հիմա, երբ ունենք Սայաթ-Նովայի հաղերի անհամեմատ հարուստ ժողովածուներ՝ ազրբեջաներեն ու վրացերեն երգերի մեծամասնության թարգմանությամբ, կարող ենք բազ-

մապատկել այն փաստերը, որոնցով ապացուցված է, որ Սայաթ-Նովայի Յարի անունը իսկապես էլ Աննա է, և որ դա բանաստեղծը ծածկագրաբար հայտնել է ոչ միայն մեկ, այլև բոլոր երեք լեզուներով:

Նախ և առաջ նշենք, որ հայերեն 11-րդ հաղում «Աննա» անունը («Անի» ձևով) ծածկագրված է զլխավոր հանգակապ բառերի մեջ (լալանին, յարանին, զայանին, մերանին, մասանին), ինչպես նաև սրանց հետ թեջնիսարար-բառախաղով կամ պարզորեն հանգավորվող բառերի մեջ (լալանին՝ 2 անգամ, նազանի, յար անին, յար անին, երանին, զայ անին՝ նույնպես 2 անգամ, զայ անին, մերանին, մեռանին, մեր անին, մի տանի, մե քանի, չիս անի, մառանին, անմաս անին, մասնեմաս անին, սուսանի, կես անի, տեսանի):

Ինչպես տեսնում եք՝ չգոհանալով այն բանից, որ արդեն երկու անգամ ծածկագրել է իր և իր «սիրեկան յարի» անունների սկզբնատառերը («Նու ու Ալիբ զայ անին» և ապա «Սե ու Ալիբ մաս անին»), Սայաթ-Նովան այդ նույն հաղի մեջ ևս փառվեց անգամ, քանակեց հանգերի մեջ կրկնում է իր սիրածի սիրելի անունը:

Նա նույն այդ անունն է ծածկագրել նաև հայերեն 65-րդ հաղում. «Նույի՛ր գեմին ազատեց, ինձ՝ Ալիբն ու Նու Ալիբ», այսինքն՝ Անա-Աննան: Նա, անտարակույս, այդ նույն անունն է ծածկագրել նաև վրացերեն երկու հաղի մեջ:

Վրացերեն 7-րդ հաղի վերջում, օրինակ, նա ունի հետևյալ ծածկագրությունը.

Անունըս Սե ու Թո տառն ա,

Վր-ի վերջումն Անի-ն տեսա:

Առաջին տողի ծածկագրությունը պարզ է ու հասկանալի. Ուայր անվան առաջին ու վերջին տառերն են: Երկրորդ տողը, որ վրացերեն ունի մեկ այլ տարբերակ էլ («Վեմ քվեմոգամ անի վնախս», այսինքն՝ «Վր-ի ներքեից անի-ն տեսա»), ցայսօր վերծանված չէ (թերևս աղավաղման պատճառով), ու եթե պիտի վերծանվի, ապա վրացագետների կողմից: Սակայն մի բան անտարակույս է այս վիճակումն էլ. «անի»-ն նույն «անի»-ն է. որ 28 անգամ կրկնվում է հայերեն 11-րդ հաղում, և իր սիրածի անունն է անպայման:

Վրացերեն 10-րդ հաղն էլ ունի մի ծածկագրություն, որ Մ. Հասրաթյանը թարգմանել է ըստ բովանդակության. «Թովուզի թախտն ո՞վ կուտա քեզ, դուն էդ ցավեն չիս դնջանա»: Բնագրում այս տաղը վերջանում է անաշենիա բառով, որ ունի ոչ թե մեկ, ոչ էլ երկու, այլ երեք իմաստ. դա վրացերեն նշանակում է՝ 1. շինածն է («Արի. Սայաթ-Նովա, ի՞նչ ես լալիս, ո՞վ կտա քեզ Թովուզի թախտը, որ հնդկաց թագավորի շինածն է»), 2. Ցավ է քեզ համար (այդ հնդկաց թագավորի Թովուզի թախտին մոտենալու խնդիրը). և 3. եթե այդ բառը կարդանք արոհված՝ իբրև անաշենիա. որ նշանակում է Աննան Բոնն է, ապա համապատասխանաբար կստացվի այսպես. «Արի, Սայաթ-Նովա. ի՞նչ ես լալիս, հնդկաց թագավորի Թովուզի թախտն ո՞վ կտա քեզ. Աննան քոնն է»:

Ինչպես տեսնում եք՝ այս անաշենիա-ն մի սքանչելի ծածկագրություն է, որ կարող է կարդացվել ու հասկացվել մինչև իսկ երեք կերպ, բայց դա բնավ էլ չի խանգարում, ընդհակառակը՝ օգնում է պնդելու, որ Սայաթ-Նովան այս անգամ էլ ծածկագրության է դիմել միայն ու միայն մեկ նպատակով՝ իր «սիրեկան յարի» անունն ասելու համար:

Այդ բանը նույն արևի է նաև աղբրեջաններին հաղերում: Դրանցից մեկը (18-րդը), հաշերեն 11-րդ հաղի նման, սկզբից մինչև վերջ կառուցված է նույն անունը պարունակող հանգերի վրա: Այդ հանգերն են՝ յա դանա, յադա աա, յադ անա, յա դանա, Ադանա:

Այսքանը դեռ քիչ է. հանգավորված այս բառերի մեջ կա ավելին, քան ծածկադրված Աննա (Անա) անունը. այդտեղ կա նաև «անուն» բառը (աղբր-բեջաններին «ադ»): Ուրեմն 4 քառյականոց մի հաղի մեջ, ծածկելով հանգերի խարուսիկության տակ, Սայաթ-Նովան հինգ անգամ ոչ միայն տալիս է իր սիրածի անունը, այլև նույնքան անգամ պարզապես ճշում է. «Անունն Աննա է» («Ադ Անա»):

Ուլ-ուլ, բայց Սայաթ-Նովայի լավագույն դիտակ Մ. Հասրաթյանը չէր կարող չլսել այդ ճիշտ և վճռականապես շասել, թե «անվիճելի կարելի է համարել այն, որ երգչի անհասանելի «թագավոր» յարի անունը եղել է Աննա»²³:

Արդ. ո՞ւլ է եղել այդ Աննան:

Երեք տասնամյակ առաջ անվանի սայաթնովագետ Դ. Ասատուրը, քննարկելով ույշ հարցը, հասավ այն եզրակացության, որ այդ Աննան եղել է ոչ այլ ոք, քան Հերակլ երկրորդի քույրը: Տարիներ շարունակ այս վարկածը համարյա թե օրինականացավ: Միայն մի քանի հոգի, և այն էլ վերջերս, փորձեցին ծխել Դ. Ասատուրի կարծիքը, բայց որում, ոչ թե փաստերով, այլ մերկապարանոց հայտարարություններով, ուստի և չարժև անդադառնալ դրանց: Շատ ավելի կարևոր է լսել Մ. Հասրաթյանին, որ հարցին նայելով իրեն հատուկ շրջահայեցությամբ, գրում է. «Բայց մի՞թե պալատական շրջապատում (Թե-լավում ու Թիֆլիսում) չէր կարող լինել մի ուրիշ Աննա ևս, թեկուզ և թագավորական բազմանգամ բնտանիքից, որի գոյությունը ավելի հավանական կդարձնի երգչի հանդուգն սիրո վերսիսան: Այս հարցը մնում է չլուծված»²⁴:

Փորձենք լուծել Մ. Հասրաթյանի առաջադրած խնդիրը, բայց նախապես ընդգծելով Եկատերնք, որ Սայաթ-Նովայի կյանքին ու գործին քաջատեղյակ դիտնականը այդ որոնումները ենթադրում է կատարել հենց «պալատական շրջապատում», «քեկուզ և քաղավորական բազմանգամ բնտանիքի» մեջ:

Կարելի է Սայաթ-Նովայի հաղերից տասնյակ ու տասնյակ օրինակներ բերել ցույց տալու համար, որ նրա Գոգալն ու Նազանին հենց այդ շրջապատից են: Կարելի է, անշուշտ, բերել և հակառակը ցույց տվող տողեր: Բայց այդ վերջինները անպայման և անկասկած կլինեն Սայաթ-Նովայի կա՛մ նախնական շրջանի հաղերից (հմուտ աչքը դրանք կարող է դանազանել նաև առանց թվադրվածության), կա՛մ ընդհանուր, եթե կարելի է ասել՝ անհաւաստ, գովա-բային-մեջլիսական, գովասանական-խնճույրային, ժանրային-բասական երգերից: Հասուն, արդեն անդառնալիորեն սիրահարված Սայաթ-Նովայի բոլոր հաղերը (բացի մեկ-երկու դուռ ժանրային «Ասի-Ասավ»-ից) անկանխակալ հետադուրդին կարող են հասցնել միայն մեկ եզրակացության. Սայաթ-Նովայի «անիղբարը» եղել է պալատական միջավայրում, պատկանել է աբխազական էամ, առնվազն, իշխանական տոհմի:

Այս ապացուցելու համար պետք չէ հիշել, թե այդ Գոգալ-Նազանին ունի այնպիսի արդուգարդ, պերճանքի այնպիսի առարկաներ, որոնց առկայու-

23 Առաջաբան, էջ XXXI:

24 Նույն տեղում, էջ XXXI:

թյունն իսկ բավական է ասելու, որ բանաստեղծի պաշտելի էակը ընդադուրկ խավերից չէ։ Բայց նույնպիսի արդուզարդ, պերճանքի նույնպիսի առարկաներ կարող էին ռենեսանս ոչ միայն արքայական ու նախարարական գերդաստանի տեղամենքը, այլև, դիցուք, մեծահարուստ վաճառականների զարմիկները, որոնցով լեցուն էր այն ժամանակվա Թիֆլիսը։

Ապացուցման համար, ինչ ասել կուզի, չեն վկայակոչվելու նաև բոլոր այն ածականներն ու որակումները, որոնք պարզապես արդյունք են բանաստեղծական փոխաբերության, պատկերավորության կամ շահագանցության։

Պիտի հիշել այն փաստերը միայն, որոնք անառարկելիորեն կապվում են թագավորական կամ առնվազն իշխանական-նախարարական տների նիստ ու կացին։

Իսկ այդպիսի փաստեր շատ կան։

Ամենից առաջ հիշենք Սայաթ-Նովայի արդեն մեկ անգամ հիշված այն հաղթ, որ հավելված Բ-ի 4(85)-րդն է։

Էս վրաց թագաներու մեջ չիման կինքոս մաշեցի,
Էս սիվասիրտ յարի ձեռին արուն-արտսունք թափեցի։

Տարրական տրամաբանությունը պահանջում է ընդունելու և անհերքելի համարելու այն, որ այդ «սիվասիրտ յար»-ին պիտի փնտրել հենց «վրաց քա-վաղներու մեջ», որտեղ երգիչը ոչ միայն «չիման կինքն է մաշել», ոչ միայն «խալխի նամուս է քաշել», այլև «սիվասիրտ յարի ձեռին արուն-արտսունք է թափել»։

Որ այդ «սիվասիրտ յարը» հասարակ ընտանիքից չէ՝ Սայաթ-Նովան ինքն է հայտնում մեկից ավելի անգամ։ «Վալ թե վերջում իմ ասլին հավան չրլիս».— դիտակցում ու խոստովանում է ինքը (Վ—11)՝ իմանալով, որ նա երբեք իր տուն չի գա, իսկ եթե գա, ապա միայն մտովին, երևակայությամբ, Սայաթ-Նովայի բառով ասած՝ խիալ-ով. ոչ թե «ուրիշներու նման», այլ «թաքուն»։ «պատկերող ամեն յադի ցույց շտալով», պատկերավոր ասած՝ «վերից վար գաս՝ լուսնակի պես ինձ հյուր գաս» և «ծիծեռնակի պես մեր դռեն դուս գնաս» (Վ—11)։

Նա շրջապատված է ակնեղենով ու ոսկեղենով։ Ոսկուց է նրա ոչ միայն փանրը, մկրատը, այլ նաև մինչև իսկ կոշկատակի պայտը։ Ոսկուց է նրա մանկան օրորոցն անգամ («Քու զաթրն քու նման կուլի. կշտիտ ունիս օսկե բառուր. Հ—25, ինչպես և՝ «Հուրի-փերին մեջրն պառկած օսկե օրորանրն տեսա»։ Վ—7)։ Նրա ոչ միայն թասն է ոսկե («ածա, խմենք օսկե քասով»), ոչ էլ միայն ձեռին բռնածն է բլուրեղից («ձեռիտ բռնածրն բուլ է», Հ—25), այլև նույն այդ բլուրեղից է ողջ սենյակը («բուլն ղուրուս նստած՝ հերիք մաշիս դուն», Վ—12)։ Ավելին. բլուրեղից ևն նրա տան բազրիքի ճաղերն անգամ («կուրտ շիմշատ մատնիրտ՝ մում-բրուլն նաղին կարոտ է», Հ—30)։

Այս բոլոր նախանշանները (որոնց թիվը կարելի է եռապատկել ու քառապատկել) ցույց են տալիս, որ Սայաթ-Նովայի «սիրեկան յարը» մի բարձրատոհմիկ-ազնվազարմ կին է։ Բայց սրանք, վերջիվերջո, միայն նախանշաններ են։

Հիմա՝ արդեն նշանները։

«Սուլթան ու հան իս ինձ ամա», «Դուն իմ Շահ իս, Սուլթան հան իս»,— այս և նմանատիպ բազում արտահայտություններով լեցուն են Սայաթ-Նովայի

հաղերը, և ոչ ոք այնքան միամիտ չի լինի, որ բանաստեղծական սույն համեմատություններին նայի իրրև իրողության կամ ճշմարտության: Նույն և առավել առատությամբ կգտնենք հակառակը. Սայաթ-Նովան իրեն էլ համարում է իր «սիրեկան յար»-ի նոքար-ղուլ-ծառան, որ նույնպես այլ բան չէ, քան բանաստեղծական փոխաբերություն: Բայց ահա (վրացական 12-րդ հաղում) կարողում ենք.

Յարբս շնդու Շահի իխտիար ունե.
Ամեն հուրմը գլուխ բերող ճար ունե.
Բրուե սինով անդին ալ ու քար ունե.
Սրով, նիզով դուռը պահող ջար ունե...
Ո՛վ իս, Սայաթ-Նովա, մե շարբաշ իս դուն:

Ամեն «սիրական յար» իր սիրածի վրա կարող է, անշուշտ, ունենալ «Հնդու Շահի իխտիար», ինչպես նաև «ամեն հուրմը գլուխ բերող ճար»: Ոչ սակավ «սիրեկան յար»-եր էլ կարող են «բրուե սինով անդին ալ ու քար» ունենալ: Բայց... ուշադրություն դարձրեք ընդգծված ջար բառին, որ նշանակում է շփախումբ, պահակախումբ:

Անլրջություն կլինի այս բառի տակ էլ «բանաստեղծականություն» որոնել: Այստեղ բառն ունի շոշափելի, որոշակի, կշռվելու չափ իրական իմաստ: Ըստ որում ջար-շքախումբ-պահակախումբ բառը միայն այստեղ չէ գործածված: Ահավասիկ վրացական ևս մի հաղ (8-րդը), որի մեջ Սայաթ-Նովան իր «սիրական յար»-ին համեմատելով կրկին «Հնդու թաքավորի թախտ»-ի հետ և շոտհանալով դրանից՝ գտնում է ավելի արտահայտիչ ու բնորոշ մեկ այլ պատկեր («Դուն մե փուրբ, սիրուն բերք իս՝ գուղի նիղ դուռն ի՞նչ իս անում», գյուղի նեղ դռան փոխաբերությամբ նշանակելով իրական ու իրավական իր վիճակը՝ ընդդեմ «մե փուրբը, սիրուն բերթ»-ի): Իսկ հաղի վերջում էլ՝ նորից նույն ջար-ը, իբրև պարտադիր պատկանելիք «փուրբը, սիրուն բերթ»-ի. «Սայաթ-Նովան է աղաչում, էլ ավել ջարն ի՞նչ իս անում»:

Այսպիսով՝ Սայաթ-Նովայի «սիրական յար»-ը այնպիսի մեկն է, որ «սրով ու նիզակով դուռը պահող պահակախումբ-շփախումբ ունի», և Սայաթ-Նովայի ցավն ու աղաչանքն էլ հենց այն է, որ այդ պահակախումբ-շքախումբը գոնե չբաղմանա («էլ ավելի ջարն ի՞նչ իս անում»):

Այս իմանալուց հետո արդեն այլ կերպ է հնչում վերոբերյալ քառյակի վերջին տողն էլ. «Ո՛վ իս, Սայաթ-Նովա, մե շարբաշ իս դուն»: Ընդգծված շարբաշն այլևս հոմանիշ չէ նոքար-ղուլ-ծառաներին, այլ ունի նույնքան իրական-իրավական կշիռ, որքան «սրով, նիզով դուռը պահող ջարը»:

Հիմա վերընթերցենք հայերեն այն հաղը (11-րդը), որի մեջ Սայաթ-Նովան 28 անգամ ծածկագրաբար տալիս է «յարի սիրտըն դայ անող յարի» անունը: Վերընթերցենք՝ կանգ առնելով հետևյալ քառյակի վրա.

Բեմուրվաթ յա՛ր, խիթրս գրլխևս մի տանի.
Իարդիրբս շատացավ քանի՛ մե քանի.
Գիղիմ վուր, յա՛ր. դուն ինձ լայիղ չիս անի՝
Դուն մե քաֆավուր իս. իս մե խիղճ դավի:

Այս ամբողջ հաղը, ինչպես արդեն գիտենք, ծածկագրություն է սկզբից մինչև վերջ և միաժամանակ սպառիչ խոստովանություն, արված ճակատագրական մի պահի (պալատից վտարվելու ժամանակ): Իսկ ընդգծված տողերը ան-

մնացորդ համընկնում են քիչ առաջ քննարկված կտորներին։ Այնտեղ՝ «Վայ քե վիրշում իմ ասլին հավան չլիս», իսկ այստեղ՝ «Գիղիմ վուր, յա՛ր, դուն ինձ լայիղ չիս անի»։ *այնտեղ՝ «Հնդու Շահի իխտիար»-ի տեր նրա Յարը «Սրով, նիգով դուռը պահող ջար ունե», իսկ այստեղ՝ պարզապես «Գուն մե քաֆա-վուր իս»։ այնտեղ՝ «Ո՛վ իս, Սայաթ-Նովա, մե շարֆալ իս դուն», իսկ այստեղ՝ նույն ինքը «մե խիղճ դավրիշ» է։*

Վերընթեռնենք նաև վրացական այն հաղը (10-րդը), որի մեջ է եռանշա-նակ «անաշենիա» ծածկագրությունը։

Եվս մեկ անգամ հաստատելով, թե «Քի սազ գու քա զարբաբ ու զառ, օսկե կոճակ շարան-շարան»։ խոստովանելով, թե «Բեզարիլ իմ գովք անե-լում... յիս քիզ ամա խաղիր ունիմ, վուխճր հարուր քառսուն խանա»։ ակամա հայտնելով, որ շարան-շարան «օսկե կոճակ»-ների հետ մեկտեղ «էտ շիրմայի-վրզով» Գօզալը ունի «ձեռքն օսկե մկրատ»։ նաև շմոռանալով հայտնել նույ-նիսկ մի այնպիսի գուտ անձնական «զաղտնիք», թե «չեմ դողացի, յիս գրթել եմ գլխիտ շանան» (սանրը),— նա ծածուկ չի պահում մի երկրորդ «զաղտնիք»։ էլ՝ այն, որ «սիրած յարըտ խուր քընիլ է, հալբաթ ազդիլ է քու «նա-նա»-ն»՝ սրանով իսկ ավելացնելով ևս մի փաստ այն մասին, որ իր պաշտելին ամուս-նացած-իր Յարն ունեցողն կին է²⁵։ Բայց մեզ, տվյալ դեպքում, հետաքրքրողն այս ամենը չէ, այլ այն, որ երգիչը աղաչում է օգտվել «սիրած յար»-ամուսնու յիսուր քնիլ»-ուց և դուրս գալ «Բաղումրն ման գալու»։ «Դուս եկ յարով (այ-սինքն՝ թեկուզ ոչ մենակ, այլ ընկերուհիների հետ),—աղերսում է նա և շա-րունակում,—դուս եկ ջարով (թեկուզ և շքախումբ-նաժիշտներով)»։

Ինչպես տեսնում եք՝ այս անգամ էլ նրա «սիրական յարը» այնպիսի մեկն է, որ «ծաղկած Բաղումրն ման գալու» ժամանակ էլ ոչ թե մենակ է, այլ շրջա-պատված նաժիշտական յարով ու ջարով։ Այսքանից հետո մի՞թե բնական չէ. երգչի անհուսուծյունն ու դրա գիտակցությունը։

Մահու ճանգեն ի՛նչպիս փախչիմ. գիղիմ, վուր էլ դուս չիմ գա յիս.
Աւար-աշխառն էլ իմն րլեւ, վիրշումն էլի հույս չըկա ինձ։

Այս՝ նախավերջին տան մեջ, իսկ վերջին տան մեջ էլ՝

Չուր իս լալի, Սա՛յաթ-Նովա, էտ խիալը մտկետ հաճե.
Թովուզի քախտն ո՞վ կուտա ֆիզ... (Ու՛ եռանշանակ անաշենիա-ն),

Եվ իսկապես էլ. եթե իր «սիրական յարը» այնպիսի մեկն է, որ «սրով, նի-դով դուռը պահող ջար ունե» և «ծաղկած Բաղումրն ման գալու» պահին էլ շրթ-ջապատված է այդ ջարով, այլ կերպ ասած՝ պարզապես «մե թաքավուր» է, ըստ որում արդեն ունի «սիրած յար», իսկ ինքն էլ ընդամենը «մե շարքաշ» է կամ «մե խեղճ դավրիշ»—պարզ չէ՞ արդյոք, որ այլևս նույնիսկ ավելորդ է խո-սել «ասլին հավան րլիու» կամ «լայիղ անելու» մասին։ Մնում է միայն մեկ քան՝ «էդ խիալը մտկետ հաճե» (այսինքն՝ հրաժարվիր մտածին փափագից, երևակայված սիրուց), որովհետև «Թովուզի քախտն ո՞վ կուտ ֆիզ»։ Դրան ավելացրեք անաշենիա բառի երիմաստ ծածկագրությունը,—և պատկերի ող-բերգականությունը կլրանա։

²⁵ Սայաթ-Նովայի «սիրական յար»-ի ամուսնացած լինելը կարելի է ապացուցել իր իսկ հաղերից քաղված բազմաթիվ փաստերով։

Ահա այս է և այսպիսին է Սայաթ-Նովայի «սիրեկան յարր»:

Կարո՞ղ էր նա լինել թեկուզ ամենահարուստ վաճառականի դուստր կամ կին: Ո՛չ: Պահակախումբ-շքախումբ-ջառ կարող էին ունենալ նախարարական և արքայական տան զարմերը միայն:

Ուստի և Աննա — Անա-Անի-ին պիտի փնտրել միայն ու միայն պալատական միջավայրում, զույգ արքաների (Թեյմուրազի և իր Հերակլ որդու) բազմաճյուղավոր գերդաստանում:

* * *

Թեյմուրազի և Հերակլ II-ի ժամանակ վրաց արքունիքում կային չորս Աննա:

Առաջին Աննան, որ կոչվում է նաև Աննա-խանում, Թեյմուրազ թագավորի երկրորդ կինն էր: Նրա առաջին կինը՝ Բամարը, որ Վախթանգ VI-ի դուստրն էր (և Հերակլ II-ի մայրը) 1744-ին ղեռ կենդանի էր ու կարևոր դեր խաղաց իր ամուսնու և որդու թագադրումների գործում: Նա մեռավ 1746-ին, և Թեյմուրազ թագավորը (կարճատև սգից հետո, հենց նույն թվականին) ամուսնացավ Աննա-խանումի հետ՝ այս առթիվ նազիր Շահից ստանալով հարսանեկան շքեղ օժիտ²⁶:

Ըստ պատմիչ Պապունա Օրբելիանու Աննա-խանումը Աբաշիձեների նախարարական տնից էր, որ սխալ է²⁷: Աննա-խանումը դուստրն էր Բարաթաշվիլու և այրին Քայխոսրո Յիցիշվիլու²⁸:

Երբ Թեյմուրազը Ս. Պետերբուրգ մեկնեց (1760-ին, ողբաց արքունիքի հետ բանակցություններ վարելու), Աննա-խանումը ըստ երևույթին նրա հետ չի եղել, որովհետև նրա անունը չկա պահպանված ցուցակում: Թեյմուրազը, ինչպես գիտենք, մեռել է Պետերբուրգից վերադառնալու ճանապարհին՝ Թիֆլիս չհասած, Հաշտարխանում: Ամուսնու մահից հետո (1762-ին) Աննա-խանումը մտել է կուսանոց: Վախճանվել է 1788-ի մարտի 8-ին²⁹:

Բարաթաշվիլու դուստրը, Յիցիշվիլու այրին, հետագա թագուհին եղել է գեղեցկուհի: Ըր «գեղեցկության պայծառափայլությամբ, արեգակնային ճանաչափայլ ճառագայթներով նա ստվերում էր բոլոր ղեռատի կույսերին, իրկնքի յոթ լուսատուները ստրուկ էին նրա մտքի իմաստության առջև», — այսպիսի վերամբարձ ոճով և ճարտասանական եղանակով է նրա մասին խոսում Պապունա Օրբելիանին՝ արքունի գովերգակ մատենագիրը³⁰:

Այդ ժամանակաշրջանի լավագույն դիտականներից մեկի՝ Բանաստեղծ-ակադեմիկոս Գեորգի Լեոնիձեի վկայությամբ, Աննա-խանումը սիրել է պերճանք ու բանաստեղծություն, ինքն էլ գրել է ոտանավորներ³¹:

26 Г. Кикодзе, Ираклий Второй, 1948, Тбилиси, էջ 54:

27 Պատմիչը այս Աննային շփոթել է մեկ այլ Աննայի հետ, որն իսկապես Աբաշիձեի տնից էր և դարձավ ոչ թե Թեյմուրազի, այլ նրա որդի Հերակլի կինը: Նրա մասին՝ թիշ հետո:

28 Տե՛ս Պ ա տ ո ն Ի ո ս ե լ ի ա ն ի, Գեորգի տասներեքերորդի կյանքը, 1936, Թիֆլիս, էջ 171: Ս. Յայիշվիլի, Բեսիկի, Թիֆլիս, 1962, էջ 10: Գ. Լեոնիձե, Բեսիկի, Թիֆլիս, 1953, էջ 83, բոլորն էլ՝ վրացերեն:

29 Տե՛ս Պ. Իոսելիանի վերոհիշյալ գիրքը, որ վկայում է, թե Աննա-խանումը վախճանվեց Անտոն I կաթողիկոսի մահվանից 8 օր հետո, իսկ Անտոնը մեռել է 1788-ի մարտի 1-ին:

30 Տե՛ս Գ. Լեոնիձե, Բեսիկի, էջ 43:

31 Բանաստեղծություններ են գրել նաև նրա քույրերը՝ Անաստասիան և Բարբարեն:

Երկրորդ Աննան Հերակլ II-ի քույրն էր՝ ծնված Թեյմուրազ թագավորի և իր առաջին թագուհի Թամարից։ Սա ամուսնացավ իշխան Դեմետրե Օրբելիանի հետ՝ 1744-ի հուլիսին, երբ հենց նոր էր թագավորել իր հայր Թեյմուրազը (իրեն Քարթլիի թագավոր) և իր եղբայր Հերակլը (իրեն Կախեթի թագավոր)։

Նորա ամուսնուն (հավանաբար փեսայության առթիվ) Թեյմուրազ թագավոր-աները նույն թվականին «շնորհեց... Քարթլիի և Ղաղախ-Բորչալուի մանդատորթութուցեսությունը»³²։

Այս Աննան նույնպես եղել է գեղեցկուհի։ Նադիր շահի հնդկական արշավանքի մասնակից Հերակլը Հնդկաստանից քողն ուղարկած իր նամակում այսպիսի տող ունի. «Արքայադուստր իմ Աննա. քո անօգուտ, ոչնչով քեզ չծառայած և անհաճո արքայազն Հերակլը հանդգնում է համբուրել քո չքնաղ աչքերն ու դեմքը»³³։

Աննան ունեցել է երկու տղա (Թամազ և Մամուկա)։

Աննան այրիացել է (այսինքն՝ Դեմետրե Օրբելիանին վախճանվել է) 1772-ին³⁴։

Երրորդ Աննան Հերակլ II-ի կինն է։

1744-ին, երբ հայր ու որդի թագավորները պաշարել էին Սուրամի բերդը (որտեղ ամրացել էր ապստամբած Դիվի Ամիրխանին՝ Նադիր շահի հնդկական արշավանքին մասնակցած զորագնդի մեզ ծանոթ հազարապետը), Հերակլն արդեն բաժանված էր իր առաջին կնոջից՝ Քեթևանից, որ Վախթանգ Ղափլանիշվիլու դուստրն էր։ Հենց այնտեղ էլ Հերակլը երկրորդ անգամ ամուսնանում է այս Աննայի հետ, որ Զաալ Աբաշիձեի դուստրն էր³⁵։ Սրան Իմերեթիայից իր մոտ էր բերել Հերակլի հորաքույրը, որ Աննայի հորեղբոր կինն էր։ Պսակը կատարվում է Սուրամիին մոտիկ Կվիշխեթի գյուղում, որտեղ ապրում էր Հերակլի հորաքույրը՝ Անուկան։ «Երկու օր ու գիշեր խնձույք արեցին,— գրում է ականատեսը,— բայց հրաձգությունն ու հրետանականությունը խլացրեցին խրախճացողներին»³⁶։

Աննա թագուհին վախճանվեց շատ կանուխ՝ 1749-ին ըստ Գ. Լեոնիձեի. տե՛ս «Բեսիկի», էջ 83) կամ 1750-ին (ըստ Կիկոձեի)։

Չորրորդ Աննան Հերակլի քույր Աննայի (և Դեմետրե Օրբելիանու) թոռն էր՝ Մամուկա Օրբելիանու և Մայայի դուստրը, հետագայում Իմերեթի թագուհին, որ ծնվել է 1766-ին։ Սրա հայրը (Մամուկան)՝ Հերակլի սիրելի քեռորդին, չէր մանկությունից սկսած մեծանում էր քեռու պալատում։ Այդտեղ էր մեծանում նաև սրա դուստրը՝ այս (չորրորդ) Աննան։

Արդ. այս չորս Աննա-ներից ո՞ր մեկը կարող էր լինել Սայաթ-Նովայի ճալատագրական սերը։

Սկսենք վերջից։

Հերակլի քոռ քեռը ոչ մի կերպ չէր կարող խաղալ այդ դերը, որովհետև ծնվել է այն տարին, երբ Սայաթ-Նովան այլևս փաստորեն Սայաթ-Նովա չէր։

32 Տե՛ս Մ Ե Լ Ի Բ Ե Բ Ե Կ, Վրաց աղբյուրները, հատ. 3, էջ 119։

33 Г. Кикодзе, Ираклий Второй, էջ 36։

34 Գ. Լ Ե Ո Ն Ի Զ Ե, Բեսիկի, էջ 82 և 88։

35 Պատմիչ Պապուկա Օրբելիանին այս Աննայի հետ է շփոթել Աննա-խանումին՝ սրան հաջորդելով Աբաշիձեների տոհմից։

36 Տե՛ս Г. Кикодзе, Ираклий Второй, էջ 47։

Պետք է բացատրել նաև երրորդ Աննային (Հերակլի երկրորդ կնոջը), որովհետև նա վախճանվել է 1749—1750-ին, մինչդեռ Սայաթ-Նովայի սիրային բանաստեղծությունները դրված են այդ թվականից հետո, ավելի ճիշտ՝ սկսած 1753-ից, երբ թագուհի Աննան արդեն երեք տարվա հանգուցյալ էր։

Մնում են Աննա-խանումը (Հերակլի մորացուն) և Աննա Բատոնիշվիլին (Հերակլի քույրը)։

Շատ զայթակղիչ է Աննա-խանումի հարցը։ Գեղեցկուհի Պերճանքի և բանաստեղծության սիրահարու Ինքն էլ բանաստեղծուհի։ Ամուսինը, ամենայն հավանականությամբ, իրենից ահագին տարեց։ Եվ ապա՝ կուսանոց մտնելը, և դա՝ համարյա նույն ժամանակ, երբ Սայաթ-Նովան էլ հարկադրաբար դարձավ Տեր-Ստեփանոս քահանա։

Կարելի էր վստահությամբ կանգ առնել այս Աննայի անվան դիմաց, իբրև Սայաթ-Նովայի բազմաթիվ ծածկազրույթունների պատճառավորի, եթե չլիներ հակաքվե փաստեր, որոնցով «ղեմ»-ը անհամեմատ զորեղանում է «թեր»-ից։

Վերհիշենք, որ մինչև թագուհի դառնալը Աննան արդեն ամուսնացած և այրիացած տիկին էր։ Երկրորդ անգամ ամուսնանալիս Թեյմուրազը 46-ամյա տարեց մարդ էր, ուստի և հազիվ թե նոր ընտրյալ թագուհին լիներ ղեռատի կամ շատ երիտասարդ. տարբերությունը, շատ-շատ, կարող էր լինել 10 տարուց ոչ ավելի։

Սայաթ-Նովան կարող էր այդպես խելակորույս սիրահարվել իրենից 10—15 տարով մեծ, այրիացած և երկրորդ անգամ ամուսնացած մի կնոջ և, որ կարևոր է, մինչև 1760 թվականն էլ (այսինքն՝ մինչև իր Դավթարի փակումը) այրվել ու մոխրանալ այդ սիրուց։ Հազիվ թե։

Հայտնի է նաև, որ Աննա-խանումը եղել է չափազանց «պատվախնդիր, հասարակ և հպարտ»³⁷։ Նա չէր քաշվում նույնիսկ ամենակարող Հերակլից, իսկ իր թագավոր ամուսնու՝ 60-ամյա Թեյմուրազի Ռուսաստան մեկնելու և տունդարձի ճանապարհին վախճանվելու մեջ մեղադրում էր Հերակլին, րստ որում բնավ էլ «չէր ծածկում իր դժգոհություններն ու հանդիմանությունները։ Ինքը Հերակլին էլ չէր սիրում Աննա-խանումին, իբրև խորթ մոր»³⁸։

Ամուսնու մահից հետո կուսանոց մտնելն էլ այլ բան չէր, քան դժգոհության ու բողոքի ցույց ընդդեմ Հերակլի, ապա և՛ իբրև ապացույց այն սիրո, որ նա տածում էր իր հանգուցյալ թագավոր-ամուսնու հանդեպ։

Այրիացած, երկրորդ անգամ ամուսնացած, Սայաթ-Նովայից անկասկած շատ տարեց, պատվախնդիր ու պատվասեր, խստաբարո ու հպարտ, հանդրդնության շափ անվախ և ամուսնուն սիրող։ Անկարելի է, որ այսպիսի մեկը կամա թե ակամա դառնար Սայաթ-Նովայի ճակատադրական սիրո և ծածկազրույթունների պատճառը։

Մնում է միայն մեկ Աննա՝ հենց այն Աննան, որի անվան դիմաց տասնամյակներ առաջ կանգ է առել նաև հանգուցյալ Գ. Ասատուրը։

Հանձին Աննա Բատոնիշվիլու մենք այժմ ունենք ևս մի նոր՝ մի տասնմեկ-երորդ ապացույց Սայաթ-Նովայի ծննդյան նոր թվականի համար, որովհետև Աննա Բատոնիշվիլին ծնվել է... 1722³⁹-ին։

37 Գ. Լ. և Ռ. Ի. ձև, Բեսիկի, էջ 43։

38 Նույն տեղում, էջ 43։

39 Տե՛ս նույն տեղում, էջ 83։

Լիներ նա մեկ այլ թվականի ծնունդ՝ ո՞վ, ինչպե՞ս, ի՞նչ իրավունքով պիտի պնդեր, թե Սայաթ-Նովայի «Ինձ ու իմ սիրեկան յարին մե տաբի բերած գիտենալ» տողն ունի ինքնականադրական արժեք և հավասարազոր է ծածկագրության:

Եվ, մյուս կողմից, եթե Աննան լիներ մեկ այլ թվականի ծնունդ, կարելի էր կրկին, անկախ Գ. Ասատուրի եզրակացությունից, իբրև Սայաթ-Նովայի ճակատագրական սիրո պատճառավորի, կանգ առնել նույն այս Աննայի դիմաց հարցը փակելով մի «ամենայն հավանականությամբ» կամ «ըստ իս»-ով:

Իսկ այժմ, փաստերի այս «պատահական» համընկնումով ջնջվում են բոլոր «ամենայն հավանականություն»-ներն ու «ըստ իս»-երը: Այժմ վստահորեն ու վճռականապես կարելի է պնդել, որ ճիշտ էր Գ. Ասատուրի ենթադրությունը. Սայաթ-Նովայի «սիրեկան յարը», «անիզրարն» ու «բեմուրվաթը», Գոգալն ու Նազանին եղել է Աննա Բատոնիշվիլին՝ արքայադուստրն ու արքայադուստր, Դեմետրե Սրբելիանու իշխանուհին:

Սակայն մի պահ... վերանանք այս համոզվածությունից և կրկին դիմենք հարցականի. Սայաթ-Նովայի խաղերում չկա՞ն արդյոք այնպիսի ականարկներ, որոնք կարող են հնչել իբրև կողմնակի ապացույցներ:

Զեին կարող չլինել և կան:

Վրացական 21-րդ հազար, օրինակի համար, ունի այսպիսի տողեր.

Շատ չորրեր-ծովեր տեսա, վուրը կոսին, ճշմարիտ է.

Սիրուն է Զին քաֆուրի բուր, կոսին, ճշմարիտ է:

Ուշք դարձրեք այս ընդգծված բառերին: Լիներ «Հնդու թագավորի» կամ «Փարսի թագավորի» քույրը՝ կարելի էր կարծել, որ երգիչն իր տեսածն է վկայում: Բայց ինչո՞ւ «Զին թագավորի», այսինքն՝ մի այնպիսի թագավորի, որի հողն էլ չի տեսել հաստատապես, ուր մնաց թե «թագավորի քույր»: Եվ, որ առավել հետաքրքրական է, ինչո՞ւ հատկապես քույրը: Ի՞նչ կապ ունի այս Իույրը սույն հաղի հետ և ի՞նչ նպատակի է ծառայում:

Իմ խորին համոզմունքով այս ականարկը նույնպես այլ բան չէ, քան մի յուրատեսակ ծածկագրություն նույն Աննայի մասին, իսկապես որ թագավորի քույր, բայց ոչ թե Զին, այլ Վրաց թագավորի: Եթե այս տողերին միացվի ամբողջ հաղի արտահայտած հոգեբանական վիճակն ու ողբերգական շունչը, ապա կարելի է ասել, որ դա պետք է գրված լինի արքունիքից վտարվելու ժամանակ: Ընթերցենք գոնե վերջին տունը.

Ճամփես կորավ, ափ դուս չեկա՝ ծովի ծածկած խուր տիլի պես.

Հիմի վախով թանն իմ փչում՝ լիզուս վառից տաք չիլի պես.

Մինչև կեսըս փոսի մեջն իմ՝ միչեն կոտրած հին քիլի պես.

Չեռ վի կալեք, խունացիլ եմ մինձ չուր նրեզած քիչ լիլի պես.

Սայաթ-Նովուն Գուրգեն խանի ղուր կոսին, ճշմարիտ է:

Մի՞թե սա նույն տրամադրությունն ու հոգեվիճակը չէ, ինչ տեսել ենք 1753-ին գրված հայերեն «Յիս կանչում եմ լալանին» հաղի մեջ, ա՛յն հաղի, որի մեջ «Աննա» անունն է ծածկագրված 28 անգամ, ա՛յն հաղի, որտեղ ինքը «մի դավրիչ է» (իսկ այստեղ՝ «Գուրգեն խանի ղուր») և իր Յարն էլ՝ «մե քաթավուր» է (իսկ այստեղ՝ «թագավորի քույր»՝ «Զին»-ի ծածկագրության տակ):

Հանրահայտ է Սայաթ-Նովայի այն հաղըր, որ գրված է շորս լեզվով (հայերեն 63-րդը, բնագիրը՝ 229-րդ էջում)։ Կարդանք այս հաղի վերջին քառյակը.

Արի, միդք իս, Սայաթ-Նովա, միղանշող,
Ախպուր ճամփին կիներս մատաղ բլի թող.
Սրան դարուլ իմ, արարիչ-ստիղծող,
Հոգիս շանիս դրախտի ջանեն դուս արած։

Քնդգծված տողը բառացի թարգմանությունն է պարսկերենի («Կուրբանագ մի-միրամ-ռահի բրադար»)։ Իսկ այդ ի՞նչ եղբոր և ո՞ւմ եղբոր ճամփին է մատաղ լինել ուզում «բանեն... նսնեն... Բաղեշխանեն... սիրեկանեն դուս արած» Սայաթ-Նովան։ Եվ իր անմեկին-անհասկանալիությամբ շատ նման չէ՞ այս տողը քիչ առաջ հիշվածին՝ «Սիրուն է Ձին թաքավորի քուրը, կոսին, ճշմարիտ է»։

Ես համոզված եմ, որ այդ «ախպերը» ոչ այլ ոք է, քան «էն գլխեն իմաստուն»-ը, որին երգիչը իր «հոքևուր մինձ ծնողքն» է համարել, նույն ինքը Հերակլը՝ Աննա Բատոնիշվիլու եղբայրը, որի ճամփին է իր կյանքը մատաղ անել ցանկանում Սայաթ-Նովան ու երագում, որ գոնե հոգին «դրախտի ջանեն դուս արած» չլինի։ Եվ այս «դրախտի ջանեն դուս արած» խոսքը արդյոք իր տակ չի՞ պահում արքունիքում մնալու, պալատից չվտարվելու այլաբանական իմաստը։

«Սիրեկանեն դուս արած» Սայաթ-Նովան այս քննարկվող հաղըր գրել է 1758-ի մարտի 6-ին։ Իսկ ընդամենը երկու ամիս անց (հունիսի 10-ին) նա մեկ օրում գրել է երկու համանման հաղեր, որոնք՝ հակառակ իրենց ռիթմիկ շափին ու երգեցիկ կրկներգներին՝ լեցուն են անհուն ցավով ու տառապանքով (Ա. 44 և 45)։ «Քանզվում է հոքուս աշխարը» (բառացի՝ քաղաքը. «յրխուար կոնլում շահարի»), — ահա այս հաղերից մեկի լայթմոտիվը. «Յիս բլբուլ իմ, վարթրս ծախած, ջուխտ աչկիրրս լացից ճաքած, մհլամրս կրակով սարքած», — ահա և մյուս հաղի լայթմոտիվը։ Սայրահնեղ հուսահատ պիտի լինել ասելու համար, թե «Դագագիս դիբել է խարաթ (այսինքն՝ խառատ-ատաղձագործի գործիք), աջսլից եկել է բարաթ (այսինքն՝ օրհասը մահվան մուրհակ է ուղարկել)», իսկ վերջում էլ՝

էլ հասավ քոշկ-ամարաթ
Սայաթ-Նովու դրած ջանքին, աղաչանքին, պաղատանքին։

«էշխի ճանգին ու արանքին» մնացած, «վարթր ծախած» ու «մհլամն կրակով սարքած», ուստի և դագաղից և «աջալի բարաթ»-ից խոսող Սայաթ-Նովայի հետ ի՞նչ կապ և ի՞նչ առնչություն պիտի ունենար «քոշկ-ամարաթը» (պալատ-արքունիքը), եթե այնտեղ չլինեք նրա «անջիգարն» ու «աչկի լուսը»։ Եվ այսքանից հետո փորձեցեք կարդալ վրացական 15-րդ հաղի հետևյալ տողը.

Իուն մե րաֆավուրի րագ իս, յիս էլ... հա՛ ճուրի ուրումոն։

Այստեղ էլ, ինչպես նախօրոք բերված նմանատիպ բոլոր քաղվածքների մեջ, ո՛չ «թաքավորի լիպը», ո՛չ էլ «ճուրտի դարումըն» այլևս սովորական չափազանցված խոսքեր չեն կամ լրանաստեղծական պատկերավորություն։ Սայաթ-Նովայի իրավական վիճակը (կիսաճորտ-կարճադատ-գլխի լինելը)՝

այժմ հայտնի է ամենքին: Համեմատության մյուս եզրն էլ («Դուն մե թաքավոր իս», «դուն մե թաքավորի թագ իս», «սրով, նիզով դուռը պահող ջար ունիս»...) հղել է նույնքան իրական-իրավական:

Եվ այսքանից հետո մի՞թե այլ իմաստ չի ստանում Սայաթ-Նովայի ծածկադրությունների փաստը ինքնին: Ինչո՞ւ պիտի նա դիմեր ծածկագրություններին, եթե իր «սիրեկան յար»-ը լիներ մի սովորական գեղեցկուհի և ոչ թե մի «ուրիշ յար»: Իսկապե՞ս էլ «ուրիշ»՝ մի արքայադուստր և արքայաքույր միաժամանակ: Եվ այսքանից հետո մի՞թե չի կարելի ասել, որ Սայաթ-Նովայի ծննդյան հարցի հետ մեկտեղ, երջանիկ զուգադիպությամբ, վերջնականապես լուծվում է նաև առեղծվածը «սիրեկան յար»-ի, որ եղել է Աննա Բատոնիշվիլին՝ վրաց Թևյումուրազ թագավորի դուստրը, Հերակլ արքայի քույրը, Դեմետրե Սրբելիանու իշխանուհին:

Եվ այսուհետև, առավել քան երբեիցև, պիտի նոր հնչեղությամբ ու նոր իմաստով հնչի Սայաթ-Նովայի սքանչելի տաղը.

Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած գիտեմա՛...

Րնկնելով այս հունը՝ անկարելի է չհասնել Սայաթ-Նովայի հայերեն նաև այն հաղին (22-րդ), որի վրա առաջին անգամ իր ուշադրությունն է բևեռել ռ. Լևոնյանը: Այդ հաղը թվագրված է «մարտի մեկին Քրոնիկոնի 442-ին», այսինքն՝ 1754-ին: Խաղի վերջին տունն ունի այսպիսի տող. «Բղրաբեմեն շուտ անցկացար, ո՞ւր է յարասուն տարին»: «Այդ ի՞նչ «յարսուն» (SIC) տարու մասին է խոսքը, — հարցնում է ռ. Լևոնյանը և ապա շարունակում. — եթե ընդունենք, որ այդ երեսուն տարիները ի՞ր տարիներն են, ապա հարցը լուծվում է, որովհետև այդ երգը թվական ունի՝ 1754. Իսկ այդ թվից հանելով 30 տարին (SIC) երգչի ծննդյան թվականը ստացվում է 1724-ը, այսինքն՝ երկու տարով ավելի ուշ, քան կարծում են Մելիքսեթբեկյանն ու Լեոնիձեն»⁴⁰:

ռ. Լևոնյանի հետզննությունը եղել է ճիշտ, բայց նա, ցավոք սրտի, աչքաթող է արել մի շատ կարևոր հանգամանք, ուստի և՛ տատամսելով իր իսկ դատողության վրա՝ ստիպված է եղել եզրահանգել. «Այս բոլոր պրպտումներից հետո, եթե կասկածի ենթարկենք Ախվերդյանի մոտավոր թվականը, Սայաթ-Նովայի ծննդյան տարվա հարցը մնում է առկախ»⁴¹:

Քանն այն է, որ ռ. Լևոնյանը ուշք չի դարձրել նույն խաղի երկրորդ տան մի շատ կարևոր տողին. «Դիդարետ կարոտ մնացի. էրկու տարին քամամ է»: Թե այս տողը պատահաբար ասված խոսք չէ, երևում է խաղի ողջ տրամադրությունից ու տրամաբանությունից ընդհանրապես և այս տողին հաջորդող նմանատիպ այլ տողերի կրկնությունից մասնավորապես: «Թառամեցավ կարմիր վարթըն. բաղրն բլբուլ չէ գալի», — կարդում ենք հաջորդ տան մեջ, իսկ շարունակության մեջ էլ դարձյալ նույն միտքը՝ «Մեջլումի պես սարն իմ նրնգի. Լեյլեմեն խաբար չունիմ»: «Լեյլեմեն խաբար չունիմ» — «Բաղրն բլբուլ չէ գալի» — «Դիդարետ կարոտ մնացի», — ահա թե ինչի համար է երգիչը «էրվում մրմնջալի»: Եվ միաժամանակ էլ հայտնում է, բարեբախտաբար, թե ինչքան ժամանակ է, որ «Լեյլեմեն խաբար չունի» կամ «բաղրն բլբուլ չէ գալի»: Ամբողջ երկու տարի («էրկու տարին թամամ է»):

⁴⁰ «Սայաթ-Նովա», Երևան, 1932, էջ 21:

⁴¹ Նույն տեղում, էջ 21:

Կարելի է մտածել, թե այս «էրկու»-ն չպիտի որոշակի թիվ համարել, թե՛ բանաստեղծության չափը պարզապես պահանջել է ևրկվանկանի բառ։ Բայց չէ՞ որ ևրկվանկանի է նաև «ևրևք»-ը, և նույն հեշտությամբ բանաստեղծը կարող էր «էրկու»-ի փոխարեն «ևրևք» գրել, եթե շունենար հատկապես այդ «էրկու»-ի կարիքը։

Ուրեմն՝ Գ. Լևոնյանը իր հաշիվները ճիշտ արած կլինեն, եթե 1754-ից հաներ ոչ միայն «յարասուն տարին», այլ նաև այս «էրկու տարին»։ Այս դեպքում նա կստանար ոչ թե 1724, այլ 1722։

Արձանագրենք, որ այս փաստն էլ Սայաթ-Նովայի ծննդյան տարին որոշելու տասներկուերորդ հերթական կովանն է, և տեղն ու տեղն էլ փորձենք Լրզիի կենսագրական տվյալներով հաստատել, որ այդ «էրկու տարին» իրական և ճշգրիտ թիվ է։

Բոլոր սայաթնովագետներին համար անտարակույս է, որ Սայաթ-Նովայի և վրաց արքունիքի առաջին ընդհարումը տեղի է ունեցել 1752—53-ին, և բանը վերջացել է պալատից Սայաթ-Նովայի ժամանակավոր վտարմամբ։ Փաստերը հանրահայտ են, ուստի և բավարարվենք միայն «Դուն էն գլխեն իմաստուն իս» (2—10) և «Յիս կանչում իմ լալանին» (2—11) հաղերի վերհիշեցմամբ, հաղեր, որոնցից առաջինը մի արգ-խնդրագիր է Հերակլին, իսկ երկրորդը՝ մի յուրատեսակ ծածկագրված արգ-խնդրագիր նրա քույր Աննային։

Այս ևրկու հաղերն էլ գրված են միևնույն 1753 թ., իսկ թե ո՞ր ամսին՝ չգիտենք։ Քննարկվող 22-րդ հաղով մենք կարող ենք մոտավորապես որոշել պալատից Սայաթ-Նովայի հեռացման ոչ միայն տարին, այլև ամիսն անգամ, որովհետև 22-րդ հաղը գրված է 1754-ի մարտի 1-ին, ըստ որում շմոռանանք, որ հենց այդ ժամանակ էլ լրացել է «էրկու տարին» այն օրից, ինչ երգիչ-Մեջլումը «Լեյլեմեն խաբար շունիմ» է մրմնջում կամ «բաղըն բլբուլ չէ գալի», իսկ ավելի պարզ ասած՝ «դիդարեստ կարոտ մնացի. էրկու տարին թամամ է»։

Այսպիսով՝ 1754-ի մարտ ամսին արդեն երկու տարի էր, ինչ Սայաթ-Նովան չէր լինում պալատում։ Ուրեմն՝ նրան պալատից պիտի վտարած լինեն ոչ թե 1753-ին, ինչպես իրավամբ ենթադրել են սայաթնովագետները (նկատի ունենալով «Դուն էն գլխեն իմաստուն իս», «Յիս կանչում իմ լալանին» և մի քանի այլ հաղերի տրամադրությունն ու գրության թվականը), այլ 1752-ին. ըստ որում գարնանը, — ահա ևս մի եզրակացություն, անկախ Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հարցից, որ շատ կարևոր է Լրզիի կենսագրական փաստերը բացահայտելու և ճշգրտելու գործում։ Նույն 22-րդ հաղը (իմ գրության թվականով) հիմք է տալիս հաստատապես պնդելու, որ Սայաթ-Նովան 1754-ի մարտ ամսին տակավին չէր վերընդունվել արժունիք, — ահա մի երկրորդ եզրակացություն էլ, որ նույնքան կարևոր է բանաստեղծի կենսագրության համար։

Անհետաքրքրական չի լինի ավելացնել, որ այս (հայերեն 22-րդ) հաղից Հիշտ մեկ օր հետո (մարտի 2-ին) Սայաթ-Նովան գրել է ևս մի ևրգ (ադրեբեջանական 32-րդը), որի մեջ արտահայտված են նույն հույզերն ու տրամադրությունը։ «Յիս քի համա դուլ իմ, դու էլ՝ իմ աղեն» ասելով չի գոհանում «դոշի վրա դուգուն կապած դադ» ունեցողը, այլ նաև ուվեյացնում, թե՛ «դարդրս շատ է, ոչով կեսն էլ չի տանի. միղըտ տար ինձ, բիզ կարոտ մի սպանի»։ Ընդգծված տողը և հաղի ողջ զգայական հյուսվածքը հաստատում են նույնը։

Սայաթ-Նովան 1754-ի մարտ ամսի սկզբին տակավին չէր վերընդունվել սլալատ:

Իսկ չի՞ կարելի գեթ մոտավորապես որոշել, թե ե՞րբ է նա վերադարձել արքունիք:

Ամենայն հավանականությամբ՝ հենց նույն թվականին, թերևս ընդամենը մեկ ամիս հետո:

Այս «ամենայն հավանականությունը» բխում է այն փաստից, որ ճիշտ մեկ ամիս հետո (ապրիլի 1-ին) են դրված Սայաթ-Նովայի այն երկու հանրահայտ հաղերը, որոնցից առաջինը իբրև թե «ասել է մեկ հավատարիմ սիրեկանն (NB), և մյուս էրեսին Սայաթ-Նովեն»: Դրանք են «Ինձ սիրեցիր, էշխըն ընդար, խաղի դավթար իմ քիզ ամա»-ն (կնոջ անունից. Հ—23) և «Աշխարհումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա»-ն (իր պատասխանը. Հ—24), որոնք Սայաթ-Նովայի ամենագլաբ խաղերից են թերևս և, ամենայն հավանականությամբ, թելադրված են արքունիք վերընդունվելու, ուրեմն և իր «Սուլթան ու խան» տոգալի «տիսուն» վերստին արժանանալու բերկրանքից:

Արժե ուշք դարձնել այն կիսատողի վրա, որ հնչում է Գոգալի բերանից. «Շափթենը մեկ մտիկ տու մեզ»: Այս «շափաթը», այլևայլ տարբերակներով, հաճախ է կրկնվում Սայաթ-Նովայի հաղերի մեջ: «Օրըն իր շափաթով կարոտ իմ յարին», — կարդում ենք հայերեն 20-րդ խաղում: «Թե մե շափաթ ֆիզ չիմ տեսնի՝ կու կտրիմ ֆամանչի սիմըն», — ասում է նա հայերեն 30-րդ խաղում: Սրանք այնպիսի փաստեր են, որոնց ճնշման տակ պարտավոր ենք համաձայնելու Մ. Հասրաթյանի այն ենթադրությանը, թե «պալատական մեջլիսը՝ խնճույքները, ըստ երևույթին, լինում էին շաբաթը մեկ անգամ» («Առաջաբան, XXXI-ի ծանոթագրությունը»): Այսպես դատելով՝ «շափթենը մեկ մտիկ տու մեզ» կիսատողն էլ ստանում է կովանի զորություն՝ հօգուտ այն մտքի, թե Սայաթ-Նովան վերոհիշյալ երկախոսությունը գրել է արքունիք վերադառնալու առիթով, որ, ըստ այսմ, երևի կատարվել է 1754-ի գարնանը:

Այժմ, ամփոփելով ասվածը, փորձենք հասնել եզրահանգման:

Ուրեմն՝ 1754-ի մարտ ամսից հաշված Սայաթ-Նովան ամբողջ երկու տարի կարոտ էր մնացել իր սիրածի «դիզարին»: Կարող էր նման բան պատահել: Այո՛, կարող էր. նա այդ տարիներին հեռացված էր արքունիքից, ուստի և իսկապես էլ զրկված էր իր «թաքավուր» Յարին տեսնելու հնարավորությունից: Եթե 1754-ից հանենք այդ «էրկու տարին», կստանանք 1752 թ.: Այժմ վերհիշենք, որ Սայաթ-Նովան սույն խաղի վերջին տան մեջ ունի հետևյալ տողը. «Իղրարեմետ շուտ անցկացար, ո՛ւր է յարասուն տարին», որ նշանակում է. «Խոստումդ շուտ մոռացար, շուտ երգմնազանց եղար, ուր է ասածդ երեսուն տարին»: Այս «յարասուն տարին» մի ինչ-որ «հոբելյանական» թիվ չէ՞, երբ պիտի (ըստ երբեք տրված խոստման) երկու սիրածները այդ ժամանակ միասին լինեին, իրարից բաժան չլինեին: Համենայն դեպս, եթե 1752-ից հանենք իշյալ «յարասուն տարին», ապա կստանանք 1722 թ., որ ծննդյան տարին է ինչպես արքայազուստը-արքայաքույր Աննայի այնպես էլ «խալխի նոքար» Սայաթ-Նովայի...

КОГДА РОДИЛСЯ САЯТ-НОВА?

П А Р У Й Р С Е В А К

(Резюме)

В течение 115 лет саятновведение решило много вопросов, связанных с жизнью и литературной деятельностью великого армянского поэта, певца и музыканта Саят-Новы, творившего на трех языках народов Закавказья. Однако до настоящего времени окончательно еще не разрешен вопрос о годе его рождения. Различные исследователи считали датой рождения поэта годы: 1711, 1712, 1713, 1717, 1719, 1722 и 1724.

Основываясь на данных стихотворений самого Саят-Новы, в частности, расшифровывая имеющиеся в его стихах криптограммы, автор статьи приходит к выводу, что датой рождения Саят-Новы следует считать 1722 г. Некоторые из приводимых в статье фактов тесно связаны и с проблемой любви поэта. Используя соответствующие источники, а также исходя из новой датировки года рождения Саят-Новы, в статье показывается, что объектом его любовных стихотворений действительно являлась грузинская царевна Анна.